2023, ՀՈՒԼԻՍ Ա, ԹԻՎ 13 (633)

# Բրիտանյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*Հուլիսի 7-ին*

### «Սուրբ Էջմիածինը մեր հավատքի ծննդավայր» համահայկական ուխտագնացության մասնակիցներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց հուլիսի 5–10-ը Հայաստանում անցկացվող «Սուրբ Էջմիածինը մեր հավատքի ծննդավայր» համահայկական ուխտագնացության մասնակիցներին:

Ուխտագնացությունը կազմակերպել էր Հայ Եկեղեցու համաշխարհային երիտասարդական միավորումը (ՀԵՀԵՄ):

Հանդիպմանը ՀԵՀԵՄ-ի հոգեւոր տեսուչ եւ Կենտրոնական գրասենյակի տնօրեն Տ. Թովմա վրդ. Խաչատրյանը, հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը, ներկայացրեց ուխտագնացության ծրագիրը եւ տեղեկացրեց, որ համահայկական ուխտագնացությանը մասնակցում է շուրջ 150 երիտասարդ՝ նվիրապետական աթոռներից, հայրապետական պատվիրակություններից, Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի տարբեր թեմերից:

Ներկաներին ողջունեց նաեւ ՀԵՀԵՄ-ի հոգեւոր առաջնորդ, ԱՄՆ-ի հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանը՝ արձանագրելով, որ եկեղեցասեր երիտասարդներն անցյալը գալիքի հետ կապող ոսկե կամուրջ են եւ այսօր եկել են նորոգվելու Սուրբ Էջմիածնի խորհրդով ու ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնությունը:

Այնուհետեւ երիտասարդներին իր պատգամը փոխանցեց Հայոց Հայրապետը՝ ուրախություն հայտնելով աշխարհասփյուռ հայ երիտասարդներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբված տեսնելու առիթով:

Նորին Սրբությունն ընդգծեց, որ խորհրդանշական է համահայկական ուխտագնացության խորագիրը՝ «Սուրբ Էջմիածինը մեր հավատքի ծննդավայր», քանի որ այս տարի լրանում է Մայր տաճարի հիմնադրման 1720-ամյակը:

«Սուրբ Էջմիածինն Աստծու շնորհն է եւ պարգեւը, որ սնուցել է մեր ժողովրդին հավատք, որով եւ կերտվել են հայի ինքնությունը, նկարագիրն ու ոգին, ազգային ու հոգեւոր ողջ արժեհամակարգը»,– նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հաստատելով, որ քրիստոնեական զորեղ հավատքի շնորհիվ հայ ժողովրդի զավակները կարողացել են դիմագրավել իրենց առջեւ ծառացած բոլոր դժվարություններն ու փորձությունները:

Այս առնչությամբ Նորին Սրբությունն ընդգծեց, որ հայ ժողովուրդն այսօր եւս շարունակում է հանուն հավատի եւ հայրենիքի պայքարել տարատեսակ մարտահրավերների դեմ, ինչպիսիք են համաշխարհայնացումը, հոգեւոր, բարոյական օտարամուտ արժեքները, Արցախի շրջափակումը, հայրենյաց սահմանների նկատմամբ ադրբեջանական ոտնձգությունները եւ ազգի անվտանգային խնդիրները:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց ուխտավոր երիտասարդներին, որ յուրաքանչյուրն իր երկրում ձայն բարձրացնի արցախահայության ազատ եւ անկախ կյանքի իրավունքի պաշտպանության, ինչպես նաեւ Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումների կանխարգելման համար: Հայոց Հայրապետը պատգամեց հայորդիներին, որ չթերագնահատեն իրենց կարողությունները եւ երիտասարդական ավյունով ջանքեր գործադրեն ի խնդիր հայրենիքի զորացման ու շենացման եւ ի նպաստ կարիքի մեջ գտնվող ազգի զավակների: Նորին Սրբությունն ուխտավորներին հորդորեց նաեւ անխաթար պահել ազգային, հոգեւոր ու բարոյական արժեհամակարգը, ինչպես նաեւ մեր հայրերից ժառանգած ավանդություններն ու սրբությունները:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց ուխտագնացության նախաձեռնողներին՝ ՀԵՀԵՄ-ի հոգեւոր առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանին ու ՀԵՀԵՄ-ի հոգեւոր տեսուչ եւ Կենտրոնական գրասենյակի տնօրեն Տ. Թովմա վրդ. Խաչատրյանին՝ երիտասարդական միությունների հետ աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու եւ հայրենաշեն ծրագրերին աջակցելու համար: Հայոց Հայրապետը նաեւ իր օրհնությունը բերեց թեմական բոլոր առաջնորդներին, որոնք քաջալերում, խրախուսում եւ հովանավորում են երիտասարդաց միությունների եկեղեցանպաստ առաքելությունը: Վերջում Հայոց Հայրապետը ուխտավոր հայորդիներին մաղթեց, որ Տերն ունկնդիր լինի նրանց խնդրանքներին եւ նորոգի ու զորացնի նրանց ուխտը:

*Հուլիսի 9-ին*

### Հայաստանի 6-րդ միջազգային բժշկական համագումարի մասնակիցներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի 6-րդ միջազգային բժշկական համագումարի մի խումբ մասնակիցների՝ ուղեկցությամբ համագումարի պատվավոր նախագահ բժշկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արա Բաբլոյանի:

Հանդիպմանն Արա Բաբլոյանը, Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացնելով համագումարի մասնակիցներին, տեղեկություններ փոխանցեց համագումարի աշխատանքների եւ արձանագրված արդյունքների վերաբերյալ:

Պրոֆեսոր Ա. Բաբլոյանն ընդգծեց, որ համագումարին իրենց գործուն մասնակցությունն են հեռավար բերել նաեւ Արցախի բժիշկները՝ անդրադարձ կատարելով Արցախում առկա հումանիտար ճգնաժամին:

Իր օրհնությունը փոխանցելով ներկաներին՝ Վեհափառ Հայրապետը կարեւորեց հայրենիքում համագումարի կապակցությամբ աշխարհասփյուռ հայ բժիշկների մեկտեղումը, որով իրենց կարեւոր նպաստն են բերում Հայաստանում առողջապահության զարգացման գործին: Հայոց Հայրապետը գովելի եւ խրախուսելի նկատեց նման միջոցառումների անցկացումն ու բժիշկների միջեւ մասնագիտական փորձի փոխանակումը՝ ի նպաստ հայրենիքում առողջապահական նոր մշակույթի ձեւավորման եւ բժշկագիտության զարգացման:

Անդրադառնալով Արցախի շրջափակման հետեւանքով առաջացած հումանիտար եւ առողջապահական ճգնաժամին՝ Հայոց Հայրապետը կարեւորեց սփյուռքահայ բժիշկների հետեւողական աշխատանքն իրենց երկրներում գործող բժիշկների հետ համախումբ պաշտպանելու Արցախում ապրող հայորդիների անվտանգ կյանքի եւ ազատ ու անկախ ապրելու իրավունքը:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը համագումարի մասնակից բժիշկների առաքելությանը մաղթեց բարի արդյունավորում՝ պատգամելով ամենօրյա գործունեության ընթացքում առաջնային տեղ հատկացնել հայրենիքի առջեւ ծառացած գոյաբանական եւ անվտանգային խնդիրների ու մարտահրավերների հաղթահարմանը:

### ՀԲԸՄ-ի տարբեր ծրագրերի սփյուռքահայ երիտասարդներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) «Գլոբալ առաջնորդության» եւ «Երաժշտական Հայաստան» ծրագրերի մասնակից սփյուռքահայ երիտասարդ ուսանողներին ու երաժիշտներին, ինչպես նաեւ Մոնրեալի (Կանադա) սկաուտական խմբին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ-ի Հայաստանի նախագահ, ՀԲԸՄ-ի Կենտրոնական վարչության անդամ Վազգեն Յակուբյանի: ➥ էջ 2

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

### ՀԲԸՄ-ի տարբեր ծրագրերի սփյուռքահայ երիտասարդներին

↩ էջ 1

Հանդիպմանը տիար Վ. Յակուբյանը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ շուրջ 35 սփյուռքահայ երիտասարդ Հայաստան է ժամանել՝ հարստացնելու իր գիտելիքները հայոց լեզվի, հայկական երգարվեստի բնագավառներում, ի մոտո ծանոթանալու հայկական մշակույթին ու պատմությանը, զորացնելու իր կապը մայր հայրենիքի հետ: Հայոց Հայրապետը, իր գնահատանքը բերելով ՀԲԸՄ-ին նման նախաձեռնության համար, կարեւոր նկատեց Սփյուռքի երիտասարդ հայորդիների այցը Հայաստան հատկապես այս դժվարին օրերին, որպեսզի վերջիններս հաղորդակից լինեն ոչ միայն հայրենիքի հոգեւոր ու մշակութային արժեքներին, այլ նաեւ երկրում տիրող իրավիճակին, Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամին եւ առկա անվտանգային խնդիրներին: Նորին Սրբությունն այս առնչությամբ հորդորեց երիտասարդներին հայրենասիրական զգացումի նոր լիցքերով քաջալերված վերադառնալ իրենց երկրներ եւ նախանձախնդրորեն ամեն ջանք ի գործ դնել նպաստելու հայ ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարմանը:

Նորին Սրբությունը պատգամեց, որ հայորդիներն իրենց գիտելիքներով եւ երիտասարդական ավյունով աջակցեն իրենց համայնքների առավել զորացմանն ու միասնականության կերտմանը՝ ազգային ինքնությունը պահպանելու եւ հայրենիքին օգտաշատ ծառայություն բերելու համար:

Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաեւ սփյուռքահայ երիտասարդների հարցերին, որոնք առնչվում էին հայկական համայնքներում, Արցախում եւ Հայաստանում առկա դժվարությունների հաղթահարման ուղիներին:

Վերջում Նորին Սրբությունը Պահպանիչ աղոթքով օրհնեց հայորդիներին:

*Հուլիսի 11-ին*

### ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Նյու Յորքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Մեսրոպ քհն. Հովսեփյանի եւ Չիկագոյի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Անդրեաս քհն. Կարապետյանի:

Տեր Մեսրոպը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, ներկայացրեց ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած հավատացյալներին:

Վեհափառ Հայրապետն իր սերն ու օրհնությունը բերեց ուխտավորներին, իր գնահատանքը փոխանցեց հոգեւոր հովիվներին՝ արդյունավետ սպասավորության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց հայրենիքի համար այս ծանր օրերին աշխարհասփյուռ հայոց թեմերից նման ուխտագնացությունների կազմակերպումը, ինչը հնարավորություն է ընձեռում հաղորդառնալու Հայաստանում եւ Արցախում առկա մարտահրավերներին: Այս առնչությամբ Նորին Սրբությունը հորդորեց ԱՄՆ հայոց արեւելյան թեմի ուխտավորներին իրենց երկրում բարձրաձայնել Արցախում եւ Հայաստանում տիրող իրավիճակի մասին, հետեւողական ջանքեր գործադրել արցախահայության անվտանգ կյանքի, ազատ ու անկախ ապրելու իրավունքի պաշտպանության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ պատգամեց ուխտավորներին աջակից եւ զորակից լինել իրենց հոգեւոր հովիվներին, ճիգ ու ջանք չխնայել ի նպաստ իրենց համայնքների զորացման, երիտասարդ սերնդի ազգային ինքնության պահպանության:

Վերջում Հայոց Հայրապետը պատասխանեց ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին Հայաստանում եւ Արցախում առկա մարտահրավերների հաղթահարմանը:

*Հուլիսի 12-ին*

### Վատիկանի պետքարտուղարին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վատիկանի պետքարտուղար կարդինալ Պետրո Պարոլինին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների արարողակարգի բաժնի տնօրեն Տ. Նաթան արք. Հովհաննիսյանը, Վատիկանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Խաժակ արք. Պարսամյանը, Վատիկանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Կարեն Նազարյանը եւ Սուրբ Աթոռի առաքելական նվիրակ արք. Ժոզե Ավելինու Բետանկուրը:

Ողջունելով Սուրբ Աթոռի պետքարտուղարին հայոց հոգեւոր կենտրոնում՝ Նորին Սրբությունը կարեւորեց վերջինիս այցը տարածաշրջան եւ իր գոհունակությունը հայտնեց Հայաստանի ու Արցախի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարմանն ի նպաստ ներդրվող ջանքերի համար:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով Արցախի շրջափակմանը եւ ստեղծված հումանիտար աղետին, Հայաստանի առջեւ ծառացած անվտանգային խնդիրներին, կարեւորեց միջազգային հանրության գործնական միջամտությունը՝ կասեցնելու Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումները, հարձակողական գործողությունները եւ պաշտպանելու արցախահայության ինքնորոշման իրավունքը:

Իր հերթին պետքարտուղար կարդինալ Պետրո Պարոլինը Հայոց Հովվապետին փոխանցեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս պապի եղբայրական ողջույնը՝ ընդգծելով, որ Սուրբ Աթոռի դիվանագիտական մշտական ներկայացուցչության բացումը Երեւանում կնպաստի Վատիկանի եւ Մայր Աթոռի միջեւ փոխգործակցության առավել սերտացմանը:

Անդրադառնալով տարածաշրջան իր այցին՝ պետքարտուղարը նշեց, որ այն կրում է հումանիտար բնույթ եւ նպատակ է հետապնդում նպաստելու Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ հակամարտության խաղաղ կարգավորմանը: Կարդինալ Պետրո Պարոլինը նշեց, որ վերջնական խաղաղության հասնելու գործընթացը բարդ է, քանի որ կան բազմաթիվ խոչընդոտներ, եւ այս առումով սպասված արդյունքներ դեռ չեն արձանագրվել:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր երախտագիտությունը հայտնեց Սուրբ Աթոռի եւ Հռոմի Սրբազան Քահանայապետի՝ Հայաստանին եւ հայ ժողովրդին դժվարին այս շրջանում ցուցաբերած զորակցության եւ աջակցության համար, ինչպես նաեւ իր եղբայրական ողջույնն ու բարեմաղթանքները փոխանցեց Ֆրանցիսկոս պապին:

*Հուլիսի 13-ին*

### «Ֆրանսիայի հայ երիտասարդություն» ընկերակցության անդամներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մարսել քաղաքի «Ֆրանսիայի հայ երիտասարդություն» (JAF) ընկերակցության անդամներին՝ ուղեկցությամբ խմբի ղեկավար պարոն Շամասյանի եւ տիկին Լուսինե Մելիքյանի:

Հանդիպմանը պարոն Պասկալ Շամասյանը Նորին Սրբությանը ներկայացրեց Հայաստանում ընկերակցության մշակութային, կրթական եւ սոցիալական ծրագրերը՝ կարեւորելով նաեւ երիտասարդ հայորդիների՝ հայրենիքում տիրող իրավիճակին ի մոտո ծանոթանալու հնարավորությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր գնահատանքը բերելով «Ֆրանսիայի հայ երիտասարդություն» ընկերակցության վարչության անդամներին, ուսուցիչներին եւ ղեկավարին՝ հայ երիտասարդությանը համախմբելու գովարժան ծառայության համար, անդրադարձավ ընկերակցություն կատարած իր այցելությանը եւ այն կարեւոր ջանքերին, որ գործադրվում են մատաղ սերնդին հայեցի կրթելու եւ դաստիարակելու ուղղությամբ:

Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ երիտասարդները, հայրենասիրական զգացումի նոր լիցքերով քաջալերված՝ վերադառնալով իրենց երկիր, առավել մեծ նախանձախնդրությամբ կշարունակեն նպաստել Մարսելի հայկական համայնքի զորացմանն ու առաջընթացին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը երիտասարդ հայորդիներին հորդորեց նաեւ լինել հայ ազգի արժանավոր զավակներ, սիրել հայրենիքն ու եկեղեցին, որպեսզի կարողանան պահպանել ազգային ինքնությունը:

# Քահանայական ձեռնադրություն

Յուլիսի 16-ին՝ Հիսուս Քրիստոսի պայծառակերպության տոնին, Սյունյաց թեմի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում (ք. Գորիս), Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, սուրբ պատարագի ընթացքում կատարվեց քահանայական ձեռնադրություն:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը, որի ձեռամբ քահանայական ձեռնադրություն եւ օծում ստացավ Մայր Աթոռի տարբեր կառույցներում ու թեմերում սպասավորող երեք սարկավագ: Սուրբ պատարագի ընթացքում Վահան սրբազանը, քահանայության կոչելով նորընծաներին, սրբալույս մյուռոնով օծեց նրանց ճակատներն ու ձեռքերը, ինչպես նաեւ նորաօծ եկեղեցականներին շնորհեց հոգեւոր նոր անուններ:

Գեւորգ սրկ. Կադեյանը վերակոչվեց Տեր Պետրոս քահանա, Դավիթ սրկ. Սահակյանը՝ Տ. Մովսես քահանա, իսկ Արմեն սրկ. Իսահակյանը՝ Տ. Հակոբոս քահանա: Այնուհետեւ նորաօծ քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխանցեցին ներկաներին:

Սրբազան հայրը, իր քարոզում անդրադառնալով Հիսուս Քրիստոսի պայծառակերպության տոնին, ի մասնավորի նշեց. «Պայծառակերպությամբ Քրիստոս Իր աստվածությունն է հայտնում մեզ եւ մխիթարում այն խորհրդով, որ մեր հավատքի հիմնադիրը պարզ վարդապետ, մարգարե կամ հրաշագործ մի անձ չէ, այլ նույն Ինքը՝ Աստված: Քրիստոս մարմնացյալ Աստված է, որ երկնքից խոնարհվեց եւ բնակվեց մարդկանց մեջ. դրա համար Նրան կոչեցին Էմմանուել, որ նշանակում է Աստված մեզ հետ»:

Վահան եպիսկոպոսը նաեւ ընդգծեց, որ Պայծառակերպության տոնը հրավեր է քրիստոնյաներին լինելու Աստծու ներկայության մեջ:

Դիմելով նորաօծ քահանա հայրերին՝ սրբազան հայրը հորդորեց լինել մշակներ՝ առանց ամոթի, ամուր՝ իրենց քահանայագործության, քաջ՝ փորձությունների մեջ:

Վերջում պատարագիչ սրբազանը պատգամեց ժողովրդին՝ նեցուկ եւ զորավիգ լինել քահանաներին՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելության զորացման համար:

«Ողջույնի» ժամանակ ներկա հոգեւոր դասը բարձրացավ Սուրբ խորան եւ շնորհավորեց նորաօծ քահանաներին՝ համբուրելով նրանց մյուռոնադրոշմ ճակատներն ու ձեռքերը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում քառասնօրյա պատրաստության շրջանից հետո նորընծա քահանաները ծառայության կկոչվեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր թեմերում եւ կառույցներում:

**Լրատվական նյութերը՝**
**Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի**
**տեղեկատվական համակարգի**

✠ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՎԱԳՆԵՐ

# Գարեգին Բ Ներսիսյանի հայրապետության շրջան

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին էր վիճակված 2001 թ. կատարելու սկսվող՝ երրորդ հազարամյակի եւ Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման ժէ հարյուրամյակի առաջին մյուռոնօրհնությունը: Այս արարողությունն իր համահայկական, միջազգային եւ միջեկեղեցական ընդգրկմամբ նմանը չի ունեցել Հայոց Եկեղեցու պատմության մեջ՝ Արածանիում լուսավորչահեղ մյուռոնից հետո դառնալով մյուռոնը 1700-ամյակի (տես «Սրբալույս մյուռոնի օրհնություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում», «Էջմիածին», 2001, Թ, էջ 41):

Հաջորդ օրհնությունը 2008 թ. սեպտեմբերի 28-ին էր, սակայն նախքան այդ՝ սեպտեմբերի 14-ին՝ Խաչվերացի տոնի երեկոյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Անդաստանի արարողություն, որին հաջորդեց սրբալույս մյուռոնի ծաղկանց նյութերի օրհնությունը: Վարագա Սուրբ Խաչի տոնի առավոտյան, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի եւ մասնակցությամբ Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Ա-ի, մյուռոնօրհնության առիթով Սուրբ Էջմիածին ժամանած թեմական առաջնորդների, ազգային բարերարների, քույր եկեղեցիների ներկայացուցիչների, ուխտավոր բազմահազար հայորդիների, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց Միածնաէջ Մայր տաճարում: Սուրբ պատարագի ավարտին մյուռոնի կաթսայի առջեւ կատարվեց ձիթայուղի օրհնության վերջին աղոթքը, որից հետո Մայր տաճարի զանգերի ղողանջների, ինչպես նաեւ սաղմոսների ու շարականների երգեցողության ներքո սրբալույս մյուռոնի կաթսան տեղափոխվեց Ս. Տրդատի բաց խորան: «Հրաշափառի» երգեցողության եւ Մայր տաճարի զանգերի ավետաբեր ղողանջների, հազարավոր հավատացյալների բազմության ծափողջույնների ներքո հայրապետական շքեղաշուք թափորը խաչվառներով եւ խաչերով Մայր տաճարից շարժվեց դեպի Բաց խորան: Մինչեւ ուշ երեկո աշխարհի չորս ծագերից ժամանած բազմաթիվ ուխտավոր հայորդիներ շարունակ այցելում էին Մայր Աթոռ՝ հպվելու մյուռոնի կաթսային եւ ստանալու նոր մյուռոնի օրհնությունը (տես «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց սրբալույս մյուռոնը», «Էջմիածին», 2008, Թ, էջ 18–20):

2008 թ. հետո մյուռոն օրհնվել է 2015 թ. սեպտեմբերի 27-ին: Ինչպես նախորդները, այս օրհնությունը եւս կատարվել է հազարավոր ուխտավորների ներկայությամբ: 2015 թ. նաեւ Հայոց ցեղասպանության նահատակների 100-րդ տարելիցն էր, ուստի Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սրբացյալ նահատակների բարեխոսության հայցով օրհնված մյուռոնը կոչեց «Հաղթության մյուռոն» (տես *Ոսկան քհնյ. Յովհաննիսեան*, Յաղթութեան միւռոն, «Էջմիածին», 2015, Թ, էջ 6):

2023 թ. հունիսի 5–8-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը որոշեց մյուռոնօրհնություն կազմակերպել այս թվականի հոկտեմբերի 1-ին՝ Վարագա Սուրբ Խաչի տոնի օրը («ՔՀ», 2023, հունիս Ա, թիվ 11, էջ 1), որը կլինի Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ մյուռոնի չորրորդ օրհնությունը:

**Արամայիս սրկ. ԱԶԻԶՅԱՆ**

# Հայ եկեղեցին եւ արեւելահայ դպրոցը ԺԹ դարի երկրորդ կեսին

*Սկիզբը՝ 2022-ի թիվ 23, 2023-ի թիվ 2–3*

«Յաղագս ուսման» գլխում ասվում է, որ հայոց եկեղեցական-ծխական դպրոցները պետք է առանձին ծրագիր ունենան, առարկաները պետք է դասավանդվեն հայերեն, իսկ ռուսերենի վերաբերյալ Մաղաքիա արք. Օրմանյանը գրում է. «....ռուսերէնն պարտաւորիչ ընել, Ռուսիոյ պատմութիւնն ու աշխարհագրութիւնը ռուսերէն աւանդել եւ վարժարանները կառավարական պաշտօնէից քննութեան ենթարկել....» (*Մ. արք. Օրմանեան*, Ազգապատում, հտ. Գ, Ս. Էջմիածին, 2001, էջ 5217): Հակառակ այս ամենի՝ ըստ «Արձագանքի» աշխատակից Ն. Տեր-Ղեւոնդյանի՝ դպրոցական կրթության լեզուն պետք է լինի աշխարհաբարը. «Աշխարհաբարը պիտի լինի հիմը, ուսանելի լեզուն, իսկ գրաբարը եւ նորա հետ էլ գավառական բարբառների ուսումնասիրությունը պիտի երկրորդական տեղը բռնեին եւ գլխավորին ծառայեին: Ահա սրա մեջն է ուսումնարանի զորությունը լեզվի կազմակերպության եւ աճման վերաբերությամբ» (*Մ. Մխիթարյան*, XIX դարի երկրորդ կեսի արեւելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երեւան, 1976, էջ 268): «Յաղագս մանկավարժական խորհրդոյ» գլխում նշվում է, որ մանկավարժական խորհուրդը, մի շարք հարցերից բացի, պետք է զբաղվի դասագրքերի, գրադարանի համար անհրաժեշտ մատյանների ընտրության եւ տարեկան քննության ցուցակի կազմման խնդիրներով: Ժամանակի եկեղեցական-ծխական դպրոցների կրթական համակարգի, դասավանդվող առարկաների մասին որոշակի պատկերացում կազմելու համար անդրադառնանք 1886 թ. եկեղեցական-ծխական դպրոցների ուսումնական ծրագրերին.

*Կրոն*

- Համառոտ պատմություն եկեղեցական գլխավոր տոների վերաբերյալ:
- Աղոթքների եւ սուրբ պատարագի սերտողություն:
- Եկեղեցական երգերի եւ շարականների սերտողություն:
- Հին ու Նոր կտակարանների պատմություն:
- Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու համառոտ պատմություն:

*Հայոց լեզու*

- Բանավոր եւ գրավոր վարժություններ:
- Ընթերցանություն:
- Աշխարհաբարի համառոտ քերականություն:
- Գրաբարի համառոտ քերականություն:

*Ռուսաց լեզու*

Մեջբերումը ներկայացնում ենք բառացի.

*Ա բաժին.* «Ուսումն ռուսաց լեզուի սկսանի յերկրորդ կիսամէկէ առաջին տարւոյն՝ նուիրելով այնմ կէս ժամ յաւուրն: Կէտ նպատակի դասատուութեան պարտի լինել ծանօթս առնել խօսուն բարբառոյ Ռուսաց....»:

*Բ բաժին.* «....զկնի բաւականապէս ընտելացուցանելոյ զլսելիս մանկանց յընմբռնումն անսովոր ձայնից եւ կապակցութեան նոցին.... մարթ է սկիզբն առնել ուսուցանելոյ աշակերտաց զընթերցանութիւն եւ զգրութիւն ռուս լեզուի....»:

*Գ բաժին.* «Ի վերջ կոյս տարւոյն ի հատուածոց ընթերցելոց պարտ է հանել կանոնս քերականականս եւ մանաւանդ ուղղագրականս: Աշակերտք պարտին գիտել զլեզու ռուսաց այնչափ, որչափ ինչ մատակարարեալ են նոցա հատուածքն ընթերցեալք յընթացս տարւոյն»: ➥ *էջ 6*

# Անիրավ տնտեսի առակը

*Սկիզբը՝ թիվ 6–8*



Անիրավ տնտեսի առակի այլաբանական մեկնությունն ընդգծում է «խաբեբայական կատակերգության» եւ Աստծու արքայության միության անհամապատասխանությունը: Երկու ամփոփ եզրակացությունները փորձում են իմաստ (հետեւողականություն) հաղորդել առակին՝ ուշադրությունը շեղելով պատումում ներկայացվող նենգ կերպարից: Այլաբանությունների տարօրինակությունը, սակայն, միայն մատնանշում է առակի խոր եւ միաժամանակ անհանգստացնող ազդեցությունը: Տիրոջ գովասանքն իր ծառայի անազնիվ արարքի համար բախվում է արդարության պահանջին, որը սովորաբար ընկալվում է իբրեւ Աստծու արքայության խորհրդանիշ: Ինչպե՞ս են դրանք փոխկապակցվում միմյանց:

Երբ տիրոջ գովասանքը եւ անիրավ տնտեսի վարքագիծը բախվում են այն արդարությանը, որ ենթադրելիորեն առկա է Աստծու արքայությունում, լսողը պետք է հասկանա, թե ինչ կարող է նշանակել «աստվածային արքայության արդարություն» ասվածը: Առակը չի առաջարկում «արքայության արդարության» մի նոր սահմանում կամ օրենք: Այն հուշում է, որ սույն արդարությունն ինչ-որ կերպ ուրվագծվում է այս առակում. քանի որ այս առակը ներկայացնում է մի այնպիսի իրավիճակ, որը վերաբերում է տնտեսությանը, ապա այս դեպքում աստվածային արքայությունը փոխաբերական իմաստով կարող ենք ընկալել իբրեւ տնտեսություն:

Հաշվարկի նպատակն արդարությունն է, եւ ակնկալվում է, որ տերը կմիջամտի եւ կվերականգնի նախապես հաստատված կարգը: Այսպիսով՝ այլաբանությունները մեզ օգնում եւ հնարավորություն են ընձեռում ճիշտ վերարտադրելու առակի բովանդակային եւ իմաստային կառուցվածքը:

Տիրոջ գովասանքն ընթերցողին ստիպում է հետադարձ հայացք գցել եւ վերանայել առակում տեղ գտած բնութագրումները: Արդյո՞ք տիրոջ որոշումը կամայական էր: Ունեցվածքը վատնելու մեղադրանքը ճի՞շտ էր, թե՞ կեղծ: Առակն այս հարցերի պատասխանը չի տալիս, եւ այն տրամաբանությունը, որով ընթերցողն իմաստավորել է պատումն ու առաջնորդվել դրանով, փլուզվում է, երբ վերջին հատվածում հայտնվում են տիրոջ գովասանքի խոսքերը:

Առակը ներկայացնում է աշխարհի հակառակ կողմը՝ ի տարբերություն ընթերցողի պատկերացրած աշխարհի: Տերերի եւ ծառաների այդ աշխարհում իշխանությունն ու արդարությունն այլ են: Հարուստն ունի իշխանություն, եւ նրա նախնական դատողությունը՝ կամայական եւ անորոշ, կարող է իրագործվել մեկ պարզ պատճառով. նա հզոր է: Տնտեսը կարեկցանքով իր կողմն է գրավում ընթերցողին, իսկ տերը, ի վերջո, լսարանից պահանջում է խոստովանություն, որ տնտեսի արարքն անարդար է, եւ միաժամանակ կորցնում է իր իշխանությունը՝ գովելով իր անիրավ ծառային: Տիրոջ գովասանքն ընթերցողին ստիպում է վերանայել հարուստի կարծրատիպային կերպարը, որը գործում է առակում: Ի հայտ է գալիս անորոշություն. մեծահարուստ տերերը դաժա՞ն են, թե՞ ոչ, քանի որ առակը խզում է իշխանության եւ արդարության միջեւ կապը: Ուստի ընթերցողն այսուհետեւ պետք է առաջնորդվի իշխանության եւ արդարության նոր չափանիշներով:

Այսպիսով՝ ո՞րն է առակի ուղերձը, կամ ի՞նչ տրամաբանությամբ է առաջնորդվում տնտեսը՝ գովասանքի արժանանալով եւ մեզ համար օրինակելի կերպար դառնալով: Հավանաբար, ինչպես արդարացիորեն նկատում է Հերցոգը, դա ընդամենը հնարամտություն էր, որով տնտեսը հույս ուներ արժանանալու իրենից օգնություն ստացած առեւտրականների երախտագիտությանը: Արդյո՞ք խորագետ մեծահարուստները, որոնք աշխատում էին ոչ մեծ շահույթով, նման «բարերարություն» կանեին՝ օգնելով գործազուրկ տնտեսին (օրինակ՝ աշխատանքի վերցնելով նրան), հատկապես երբ շուտով պետք է հասկանային, որ իրենց հետ գործակցած տնտեսն աշխատանքից հեռացվել է չարաշահման համար:

Ամենայն հավանականությամբ լուծման բանալին հետեւյալն է. տնտեսը զգալի լիազորություններ է ունեցել: Նա մտածել է, որ պարտավճարի տոկոսադրույքների զրոյացումը դրականորեն կանդրադառնա իր տիրոջ հեղինակության եւ գործերի հետագա ընթացքի վրա. վաճառականները հողի սեփականատիրոջ հանդեպ պարտքի զգացում կունենան, եւ կալվածատերը կփառաբանվի իր առատաձեռնության համար (արժանիք, որից հողատերը չէր ցանկանա հրաժարվել): Արդյունքում կամ հողատերը կներեր տնտեսին, որն ապացուցել էր իր հմտությունը՝ վաճառականների հետ գործարքի մեջ մտնելով, կամ առնվազն նրա ծառայությունները կառաջարկեր ուրիշներին: Եվ «տները», որտեղ տնտեսը հույս ուներ ընդունելություն գտնել, պետք է դիտարկել ոչ թե որպես անվերջ հյուրընկալության վայրեր՝ անգործության դիմաց, այլ որպես հարուստների տներ, որտեղ նա կարող է ստանալ առավել նպաստավոր աշխատանք:

Տնտեսի ծրագիրը կարծես հաջողվեց. նա դրվատանքի է արժանանում իր տիրոջից «հնարամտության» համար: Տերն իր տնտեսի գործողություններում նկատում է եւ իրեն, եւ իր հաճախորդներին օգուտ բերելու հնարամտությունը: Տնտեսը հեղինակություն է բերում իր տիրոջը եւ, որ իր համար առավել կարեւոր է, ցույց է տալիս իր գործատուին օգտակար լինելու կարողությունը: Եվ չնայած կալվածատերը խաբվել է իր ծառայից, սակայն նրան հիացնում է վերջինիս հնարամտությունը:

Առակն անուղղակիորեն գովաբանում է հնարամիտ տնտեսին: Լինելով բարդ կացության մեջ՝ տնտեսը ճգնաժամից ելք է գտնում «արդարության» գործադրմամբ, ինչն օգուտ է բերում ոչ հարուստ վաճառականներին. տոկոսադրույքների անօրինական չեղարկումը, որ իր տիրոջ նկատմամբ այնքան էլ «անհավատարմություն» չէ, իրականում, պարզվում է, հավատարմություն է Աստծու հանդեպ:

Այս առակն ընթերցողներից շատերը որեւէ կերպ չեն կարողանում տնտեսի մեջ օրինակելիություն տեսնել սոսկ այն պատճառով, որ, չնայած հնարամտությանը, նա ակնհայտորեն խորամանկ է: Բայց որոշ առակների այլ կերպարներ եւս միաժամանակ ներկայացվում են որպես շահախնդիր. օրինակ՝ անառակ որդին՝ վերադառնալու իր որոշմամբ (տես Ղուկ. ԺԵ 18–19), դատավորը՝ ճնշման ազդեցությամբ ընդունած իր վճռով (տես Ղուկ. ԺԸ 4–5), մաքսավորն իր խնդրանքով (տես Ղուկ. ԺԸ 13):

Քրիստոնեական վարդապետությունն ընդհանուր առմամբ ենթադրում է արդարության եւ անձնական շահի համատեղում, ինչպես արտացոլված է նաեւ Իսրայելի Իմաստության ավանդույթում: Այսպիսով՝ պետք չէ հեգնալից դատողություններ անել ըստ Ղուկ. ԺՁ 8-րդ համարի խոսքերի («.... այս աշխարհի որդիներն իրենց սերնդի մեջ ավելի հնարամիտ են, քան լույսի որդիները....») կամ Ղուկ. ԺՁ 9-րդ համարի հորդորի («....նույնիսկ անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ շինեք....»):

*Շարունակելի*

**ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

# Աղբյուրն

***Գերմաներենից ընտրողաբար թարգմանել ենք ֆրանսիացի հեղինակ Frere John Taize-ի «Աղբյուրի մոտ. Հիսուս եւ սամարացի կինը»* (An der Quelle. Jesus und die Samariterin) *գրքից մի փոքր հատված, որը վերաբերում է Աստվածաշունչ մատյանում հիշատակվող ջրի աղբյուրներին եւ ներկայացնում է դրանց նշանակությունը:***

Ջուրը մարդկային գոյության պահպանման ամենակարեւոր տարրերից մեկն է օդից հետո, որ շնչում ենք: Առանց ջրի կյանք գոյություն չունի: Սակայն այսօր մեր շրջապատում ջուր ունենալու համար բավական է միայն ծորակը բացել. այն ինքնին վերածվել է սովորական երեւույթի: Բայց բոլոր վայրերում ամենեւին էլ այդպես չէ. ջուրն ինքնաբերաբար չի գալիս, պետք է փնտրել: Եթե բախտը ժպտում է, մարդիկ ջուր են գտնում երկրի մակերեւույթին՝ գետերում, լճերում կամ աղբյուրներում: Սակայն առավել չորային վայրերում եւ անապատային շրջաններում, ինչպես օրինակ՝ Պաղեստինում, այնքան էլ դյուրին չէ ջուր գտնելը: Անհրաժեշտ է խոր փոս փորել՝ ստորգետնյա աղբյուր գտնելու համար, որի վրա եւ կարելի է ջրհոր կառուցել: Այսպիսով պարզ է դառնում, թե ինչու են ջրհորներն այդքան կարեւոր վայրեր եղել սուրբգրային աշխարհում: Դրանք կենսատու աղբյուրներ են՝ բառիս բուն իմաստով, շրջադարձային եւ առանցքային վայրեր, որոնք առհասարակ հնարավոր են դարձրել մարդկային կյանքը, քանի որ ջրհորի մոտ կարող էր առաջանալ եւ զարգանալ մարդկային համակեցությունը: Ջրհորի մոտ էին ժողովվում մարդիկ, եւ հազվադեպ չէին նաեւ ջրհորի շուրջ տեղի ունեցող վեճերը: Ծննդոց գրքի ԻՁ գլխում կարդում ենք, որ Իսահակ նահապետը սովի պատճառով գնում է փղշտացիների արքա Աբիմելեքի մոտ՝ Գերարա: Այստեղ նա գարի է ցանում եւ նույն տարում էլ հարյուրապատիկ բերք ստանում: Աստված օրհնում է [Իսահակին], եւ նա հարստանում է այն աստիճան, որ մեծահարուստ է դառնում (հմմտ. Ծննդ. ԻՁ 1–14): Սակայն «....փղշտացիները նախանձում են նրան եւ խցանում այն բոլոր ջրհորները, որ նրա հոր՝ Աբրահամի օրոք փորել էին նրա ծառաները. փղշտացիները դրանք լցնում են հողով» (հմմտ. Ծննդ. ԻՁ 15–16): Այնուհետեւ Աբիմելեք արքան ասում է Իսահակին. «Հեռացի՛ր մեր մոտից, որովհետեւ մեզնից շատ ավելի զորավոր եղար» (Ծննդ. ԻՁ 16). Իսահակն այդտեղից գնում եւ վրան է խփում գերարացիների ձորում: Իսահակը դարձյալ փորում է այն ջրհորները, որ փորել էին իր հոր՝ Աբրահամի ծառաները: Այնուհետեւ Իսահակի ծառաները հող են փորում գերարացիների ձորում եւ այնտեղ գտնում են ըմպելի ջրի աղբյուր: Գերարացիների հովիվները Իսահակի հովիվների հետ կառուցում են ջրհոր, ինչը վերջում հանգեցնում է եւս մեկ վեճի: Վերջիններս, մասնակցելով ջրհորի կառուցմանը, ասում են թե՝ «....իրենցն է այդ ջրհորը» (հմմտ. Ծննդ. ԻՁ 20): Եվ քանի որ ջրհորի կառուցումը վեճի առիթ է դառնում, այս ջրհորն անվանում են *Անիրավություն*: Իսահակ նահապետը եւս մեկ ջրհոր է փորում, ինչը նույնպես վեճի առիթ է դառնում. այս անգամ ջրհորը կոչվում է *Թշնամություն*: Դարձյալ ջրհոր է փորում. այս անգամ վեճ չի ծագում, եւ ջրհորն անվանում է *Անդորրություն*՝ ասելով. «Այժմ մեզ ընդարձակ տեղ տվեց Տերը եւ բազմացրեց մեզ երկրի վրա» (Ծննդ. ԻՁ 22):

Ջրհորները հաճախ ընդհարումների, սակայն երբեմն նաեւ հաշտության վայրեր են եղել: Դրանց շուրջը, կարծես, ձեւավորվել է մարդկային հասարակությունը: Ծննդոց գրքի ԻԴ գլխում խոսվում է Աբրահամի՝ իր որդի Իսահակի համար կին գտնելու ցանկության մասին: Այդ նպատակով նա իր ծեր եւ հավատարիմ ծառային ուղարկում է Քանանից հեռու՝ իր հայրենիք, որտեղ ինքն էր ծնվել: Երբ ծառան հանգիստ էր առնում ջրհորի մոտ, այսպես է աղոթում. «Իմ տեր Աբրահամի Տեր Աստված, այսօր ինձ հաջողություն պարգեւի՛ր եւ ողորմի՛ր իմ տեր Աբրահամին: Ահա ես ջրի աղբյուրի մոտ եմ, եւ այս քաղաքի բնակիչների դուստրերը գալիս են ջուր հանելու: Թող լինի մի կույս, որին ասեմ՝ «Թեքի՛ր սափորդ, որ խմեմ», իսկ նա ինձ պատասխանի՝ «Խմի՛ր, քո ուղտերին էլ ջուր կտամ, մինչեւ որ հագեցնան խմելուց»: Թող նրան էլ նախատեսած լինես քո ծառա Իսահակի համար....» (Ծննդ. ԻԴ 12–14): Կարճ ժամանակ անց Ռեբեկա անունով մի աղջիկ է գալիս ջրհորի մոտ՝ կուժը ձեռքին՝ ջուր հանելու: Ծառան նրանից մի քիչ ջուր է խնդրում, եւ ամեն բան պատահում է այնպես, ինչպես աղոթքով խնդրել էր: Աղջիկը ծառային հրավիրում է իրենց տանը գիշերելու, եւ ի զարմանս ծառայի՝ պարզվում է, որ նա Աբրահամի ազգակիցն է: Երկար բանակցություններից հետո Ռեբեկան համաձայնում է ծերունու հետ գնալ՝ Իսահակի կինը դառնալու:

Հինկտակարանյան հաջորդ պատմությունը, որին ցանկանում ենք անդրադառնալ, վերաբերում է Հակոբ նահապետին (տես Ծննդ. ԻԹ 1–30): Հակոբը ճանապարհ էր ընկել հայրենիքից հեռու եւ հանգստանում էր մի ջրհորի մոտ, որի բերանին մի մեծ քար էր դրված: Մի քանի հովիվ եւս այդտեղ էին եւ սպասում էին՝ մինչեւ բոլոր հոտերը ժողովվեն, եւ միայն դրանից հետո էին ցանկանում քարը մի կողմ գլորել, որպեսզի կենդանիներին ջրեին: Գրվածքից պարզ չէ՝ ինչու էին հովիվներն իրար սպասում. արդյո՞ք քարն էր ծանր, ջրհորը ծածկված էր, որովհետեւ քիչ ջուր կար այդտեղ, կամ հովիվներն սպասում էին կենդանիներին ջուր տալուն՝ խուսափելով առավել ուշ եկողների հետ տարաձայնություններից: Եվ այդ ժամանակ մի երիտասարդ աղջիկ, ոչխարների հոտն առած, գալիս է ջրհորի մոտ: Նա Հակոբի մորեղբայր Լաբանի դուստր Ռաքելն էր: Հակոբը մի կողմ է գլորում քարը եւ ջրում մորեղբոր հոտը, ապա Ռաքելի հետ ուղեւորվում է Լաբանի տուն եւ այնտեղ իջեւանում: Հակոբը ցանկանում է կնության առնել Ռաքելին, սակայն պետք է յոթ տարի սպասեր. նա, այնուամենայնիվ, քսան տարի ծառայության մնաց Լաբանի մոտ:

# Խադավանք

*Սկիզբը՝ թիվ 12*

Խադավանքի վերակառուցմանն ու լրացուցիչ նորոգումներին ԺԳ դարավերջին եւ ԺԴ դարասկզբին մասնակից են եղել նաեւ Հասան Բ-ի որդի Գրիգորն ու նրա կին Ասփան:

Միջնադարյան Հայաստանում՝ հատկապես ԺԲ դարավերջին եւ ԺԳ դարասկզբին արհավիրքներից կամ թշնամի հրոսակներից կործանված վանքերում մնացած որոշ մասունքներ պահպանվել են հնի տեղը կառուցված եկեղեցիներում, ինչպես որ քրիստոնեության արշալույսին բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ խոյացել են հեթանոսական մեհյանների ու տաճարների հիմքերից: Հին բեկորներին նոր կյանք շնորհելու երեւույթն իր փայլուն դրսեւորումն է ունեցել ինչպես Դադիվանքում, այնպես եւ Խադավանքում:

1180-ական թվականներին Դադիվանքում Հասան Կրոնավորյալը կառուցում է մի փոքրիկ եկեղեցի, որի պատերի մեջ՝ ներսից ու դրսից, ագուցվում են հին քարեր՝ զարդաքանդակներով ու վիմագրերով, հին ու նոր խաչքարեր, որոնք թվագրվում են Դ—Զ դարերով:

Ուշագրավ է հատկապես ջրաղացքարը, որ զարդարում է Դադիվանքը: Եկեղեցու շինարարները փրկել-պահպանել են կործանված ջրաղացի բեկորը:

ԺԲ դարի առաջին կեսին ավերված Խադավանքում էլ Հովհաննես վրդ. Խաչենցին կառուցում է եկեղեցի, որի պատերի մեջ՝ դարձյալ ներսից ու դրսից, նույնպես առկա են արձանագրությունների բեկորներ եւ հին խաչքարեր:

Հովհաննես Խաչենցու կառուցած տաճարի խորհրդավոր նշաններից մեկը կարելի է համարել կտուրն իրենց վրա կրող չորս սյուների հարդարանքը: Դրանց մույթերին կենդանական, թռչնային եւ մարդկային գլուխներ են քանդակված՝ մեկական քանդակ յուրաքանչյուր սյան ճակատին, որ հայ միջնադարյան ճարտարապետության մեջ բավականին տարածված երեւույթ է: Խադավանքի գլխավոր եկեղեցու ներսի չորս սյուների մույթերին քանդակված մարդու, առյուծի, ցլի եւ արծվի պատկերներն ակնարկում են քառակերպ՝ չորս Ավետարանները:

Խադավանքի բոլոր եկեղեցիներն ու օժանդակ շինությունները կառուցված են կոպիտ մշակված բազալտե քարերից՝ ամրացված կրաշաղախով: Միայն եկեղեցու սյուները, կամարները եւ մուտքի բարավորն է սրբատաշ բազալտից: Գլխավոր եկեղեցու կողքին կառուցվել է երկու մատուռ՝ ընծայված Սուրբ Պրոկոպիոսին եւ Սուրբ Մինասին: Խադավանքի մատուռները հար եւ նման են Արցախ աշխարհի մյուս նշանավոր վանքերում առկա գլխավոր եկեղեցիներին կից մատուռներին՝ Դադիվանքի, Գտչավանքի, Հոռեկավանքի, Եղիշե առաքյալի վանքերի մատուռներին:

Խադավանքի գլխավոր տարբերակիչ հատկանիշներից կարելի է համարել այն բազմաթիվ խաչքարերը, որոնք տեղադրված են շարվածքի մեջ: Իսկ վանական համալիրի գլխավոր եկեղեցուն կից՝ հյուսիսային ճակատի արեւմտյան կողմում, վանքի զանգակատունն է, որը Վահրամ իշխանի որդի Սարգիս եպիսկոպոսը կառուցել է ԺԴ դարի առաջին քառորդում (1333 թ.): Նա է կառուցել նաեւ Դադիվանքի, Գետամեջի եւ Ծար գյուղաքաղաքի եկեղեցիների զանգակատները:

Միջնադարյան Հայաստանում ԺԳ—ԺԴ դարերում եկեղեցիների զանգակատները չունեին պարտադիր կաղապարված ճարտարապետական հորինվածք: Այս իսկ պատճառով ամեն մի վանքում լուծումները տարբեր էին լինում եւ յուրօրինակ: Եզակի է նաեւ Խադավանքի զանգակատան տեղադրությունը, որն այստեղ հյուսիսային դիրք ունի:

Հատկանշական է, որ Խադավանքի վանական համալիրը, ինչպես փաստում են ձեռագիր որոշ մատյաններ, միջնադարյան Հայաստանի հնագույն մատենադարաններից է եւ կամ երկրորդը, որ հիմնվել է հայոց գրերի ստեղծումից անմիջապես հետո:

Խադավանքն իր ճարտարապետահորինվածքային նկարագրով համապատասխան է եւ գրչության կենտրոնի, եւ մատենադարանի: Մեծ երդիկով պսակվող առաջին սրահը նախատեսված է եղել իբրեւ ձեռագրատուն, իսկ խոշոր որմնախորշերով հաջորդ դահլիճը ծառայել է որպես մատենադարան-գրապահոց: Այսպիսի կառուցվածք ունեն նաեւ միջնադարյան Հայաստանի՝ մեզ հայտնի մյուս գրատուն-գրչության կենտրոնները՝ Հաղպատ, Սանահին, Գոշավանք, Սաղմոսավանք, Հոռոմոս, Դադիվանք:

Գրիգոր իշխանի կինը՝ Ասփան, որ մեծ իշխան Տարսայիճի եւ Մինա Խաթունի դուստրն էր, Թարթառ գետի վրա կառուցում է մի կամուրջ՝ Խադավանք տանող ճանապարհին, եւ խաչքար կանգնեցնում՝ կամրջի շինարարական արձանագրությամբ:

Խադավանքն Արցախի դպրոցի եզակի ու ինքնատիպ ճարտարապետական հորինվածքով առանձնահատուկ շինություն է, որտեղ գտնվում է հայկական խաչքարերի արժեքավոր մի հավաքածու՝ մեծագույն մասը վիմական արձանագրություններով:

Խադավանքից արեւմուտք՝ ժայռի մեջ, գտնվում է Խաթրա բերդը:

Հայոց Արցախ աշխարհում հպարտ հառնող Խադավանքը մշակույթի եւ անանց արժեքների ստեղծման ու պահպանման կարեւորագույն մի կենտրոն է, որն իր անառիկ դիրքի ու ազգային իշխանների շնորհիվ ժամանակին դարձավ Հայաստանի տարբեր անկյուններում ստեղծված բազմաթիվ մեծարժեք ձեռագրերի պահպանման ու փրկության վայր, հոգեւոր լուսավորության օրրան: Եվ աստվածային լույսի ուժն ու զորությունը, որ միշտ առկա են եղել ու են ինչպես այս, նույն կերպ եւ հայոց բոլոր մյուս վանքերում, կճառագեն առհավետ՝ ի սեր եւ ի փառս Տոհմին Հայկազյան:

**Հասմիկ ՄԱԴՈՅԱՆ**

# Աստվածաշնչում

Ըստ որոշ ավանդությունների՝ երբ Հակոբը քարը մի կողմ է գլորում, պետք է որ ջուրը հանկարծ դուրս բխեր եւ վերածվեր մեծ ցայտաղբյուրի, այնպես որ այդ օրվանից սկսած բոլորի համար բավարար ջուր լիներ: Այս հատվածը նաեւ պարզաբանում է Լաբանի «խարդախ» վարմունքը Հակոբի նկատմամբ. յոթ տարի անց նա Հակոբին կնության է տալիս նախ իր [ավագ] դուստր Լիային եւ ոչ թե խոստացված Ռաքելին: Լաբանը, ըստ էության, վախենում էր, որ ջրի մակարդակը կրկին կիջնի, եւ եթե Հակոբը հեռանա, միայն մեծ ջանքեր գործադրելով՝ դարձյալ հնարավոր կլինի ջուր հանել մարդկանց ու կենդանիների համար: Այդ իսկ պատճառով նա փորձում է Հակոբին իրեն եւ իր տանը մերձ պահել:

Ջրհորի մոտ հանդիպման հաջորդ պատմությունը վերաբերում է Մովսես մարգարեին (տես Ելք Բ 15—22): Արդարությունը վերականգնելու իր անհաջող փորձից հետո նա ստիպված էր փախչել Եգիպտոսից եւ բնակվել Մադիամի երկրում: Այստեղ՝ մի ջրհորի մոտ, նա հանգստանում էր: Երիտասարդ կանանց մի խումբ՝ այս անգամ յոթ քույր, ցանկանում էին ջրել իրենց հոտը, եւ հովիվները նրանց վախեցնում եւ քշում էին: Մովսեսը պաշտպանում է նրանց եւ ջրում ոչխարներին: Դրան ի պատասխան՝ նրանց հայրը Մովսեսին առաջարկում է մնալ [իր տանը]: Արդյունքում Մովսեսը կնության է առնում քույրերից մեկին:

Ավանդության համաձայն՝ Մովսեսը կրկնում է Հակոբի կատարած հրաշքը եւ ջուր բխեցնում՝ իր ապագա աներոջն ապացուցելու համար, որ ինքը Հակոբի ժառանգն է: Հրեա պատմագիր Հովսեփոս Փլավիոսն այս պատմության սկիզբը շարադրում է հետեւյալ կերպ. «Երբ Մովսեսը մոտեցավ Մադիամ քաղաքին, նստեց մի ջրհորի մոտ ու հանգստանում էր իր հոգնեցուցիչ ճանապարհորդությունից եւ այն ծանր իրավիճակից, որում գտնվում էր: Նա քաղաքից հեռու չէր, եւ կեսօր էր» (Judische Altertümer II 11,1):

Աղբյուրի մոտ հանդիպումների հինկտակարանյան պատմությունների կողքին, որոնք ամուսնությամբ են ավարտվում, կարեւոր են նաեւ աստվածաշնչյան մյուս հատվածները, որտեղ խոսքը հենց ջրի մասին է: Ջրի վերաբերյալ թեման մեծ նշանակություն ուներ հրեաների՝ Եգիպտոսից ելքի ժամանակաշրջանում: Մովսեսի առաջնորդությամբ Եգիպտոսից դուրս գալուց հետո Իսրայելի որդիներն ստիպված էին անապատը կտրել անցնել, մինչեւ կհասնեին Ավետյաց երկիր: Անապատում, սակայն, [նրանք] ջրի սաստիկ պահանջ են զգում, ինչը մեծ դժգոհության առիթ է դառնում: Հենց անապատում, որտեղ ջուր չկա, Աստված կարող է բխեցնել այնպիսի կենսատու աղբյուր, որն անսպասելիորեն կհագեցնի ժողովրդին. «Մովսեսը, պաղատագին խնդրելով Տիրոջը, ասաց. «Ի՞նչ անեմ ես այս ժողովրդին: Մի քիչ էլ մնա՝ ինձ կքարկոծեն»: Տերն ասաց Մովսեսին. «Գնա՛ ժողովրդի առջեւից, քեզ հետ վերցրո՛ւ ժողովրդի ծերերին, ձեռքդ ա՛ռ քո այն գավազանը, որով հարվածեցիր գետին, եւ, ճամփա ընկի՛ր: Ես քեզնից առաջ այնտեղ հասնելով, կկանգնեմ Քորեբի ժայռի վրա: Կհարվածես ժայռին, դրանից ջուր կբխի, եւ քո ժողովուրդը կխմի» (Ելք ԺԷ 4—6):

Թվոց գրքում եւս ջրհորի մասին վկայություն կա փոքր-ինչ առեղծվածային շարակարգում, որը հետագա ավանդության համար կարեւոր նշանակություն ձեռք բերեց: Այնտեղ ասվում է. «Դրանից այն կողմ ջրհորն էր: Դա այն ջրհորն է, որի մասին Տերն ասաց Մովսեսին. «Հավաքի՛ր ժողովրդին, որ ես նրանց խմելու ջուր տամ»: Այն ժամանակ իսրայելացիները ջրհորի մոտ այս երգը երգեցին. «Փառաբանեցե՛ք այն ջրհորը, որ փորեցին իշխանները, այն խորացրին հզկեցին ազգերի թագավորները իրենց թագավորության եւ տիրապետության ժամանակ» (Թվեր ԻԱ 16—18):

Այստեղ խոսքն անապատում գտնվող մի աղբյուրի, այդ աղբյուրին նվիրված օրհներգի եւ մի շարք այլ վայրերի մասին է, որոնցով պետք է հրեա ժողովուրդն անցներ: Առաջին հայացքից վերը թվարկվածը կարծես անիմաստ է: Ռաբբիները սույն օրհներգը մեկնում են այսպես: Ջուրը, որ Աստված անապատում տվեց ժողովրդին, իրականում հարյուրավոր տարիներ առաջ նախահայրեր Աբրահամի, Իսահակի եւ Հակոբի փորած ջրհորն էր: Այս զարմանահրաշ աղբյուրը Իսրայելի ժողովրդին ուղեկցում էր ամայի վայրերում դեգերումների ընթացքում: Համաձայն այս մեկնության՝ կար միայն մեկ ջրհոր՝ մի զարմանահրաշ աղբյուր, որն Աստված ուղարկեց Իր ժողովրդին ուխտի ճանապարհին:

Այս մեկնությանը հղում անելով՝ որոշ ռաբբիներ շարունակում են առաջարկված ուղղությունը: Նրանք եզրակացնում են, որ այս պարագայում չէր կարող նկատի առնվել սովորական ջուր բխեցնող ջրհոր: Նրանք այլաբանական մեկնությամբ հանգում են այն մտքին, որ ջրհորը Թորան է՝ Օրենքը, ինչն Աստված Սինա լեռան վրա Մովսեսի միջոցով փոխանցեց Իր ժողովրդին: Այն կյանքի աղբյուրն էր, որը պատմության ողջ ընթացքում, նույնիսկ խոտոր ուղիներում, ուղեկցեց [Իսրայելի] ժողովրդին: Թորան փոխանցելու միջոցով ժողովուրդը հաղորդակից դարձավ աստվածային խոսքին եւ իմաստությանը: Ընդ որում՝ պետք է նկատել, որ նյութական իրականության «հոգեւոր» մեկնությունն առաջին անգամ Հիսուս Քրիստոսի Ավետարանով չի սկսվում. հրեական ավանդությանը նույնպես այն արդեն հայտնի էր: Պողոս առաքյալը՝ որպես փարիսեցիական կրթություն ստացած հրեա, մեծացել էր այս ավանդության [միջավայրում] եւ ազդվել դրանից: Կորնթոսի հավատացյալներին բացատրելու համար, որ նրանց նախնիները որոշակիորեն նույնպես մկրտություն կամ նույնիսկ հաղորդություն են ստացել, առաջարկում է անապատում իսրայելացիների փորձառության վերաբերյալ հետեւյալ պատկերավոր միտքը. «Եղբայրնե՛ր, չեմ ուզում, որ անգիտանաք, որ մեր հայրերը բոլորն էլ ամպի առաջնորդության տակ էին, եւ բոլորն էլ ծովով անցան. եւ բոլորը, հետեւելով Մովսեսին, մկրտվեցին ամպ ու ծովի մեջ. եւ բոլորն էլ նույն հոգեւոր ուտելիքը կերան, եւ բոլորն էլ նույն հոգեւոր ըմպելիքը խմեցին, որովհետեւ խմում էին հոգեւոր այն վեմից, որ գնում էր նրանց հետ, եւ այն վեմը Ինքը՝ Քրիստոս էր» (Ա Կորնթ. Ժ 1—4):

**Գերմաներենից թարգմանությունը՝ Մարիամ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ**

### ՅԱԿՈԲ ՊԱՏՐԻԱՐՔ ՆԱԼԵԱՆ

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ

*Սկիզբը՝ թիւ 9–12*

## Հաւատքի աստիճաններուն մեկնութիւնը

### Ե

Հինգերորդ աստիճանն այս էր. *դժոխք իջաւ*, որ Սուրբ Թովմաս առաքեալն ըսաւ:

Այս խօսքով յայտնի ու յստակ կը դառնայ Քրիստոսի սէրը մեռելներուն հանդէպ, որոնց հոգիները Ադամի մեղքին պատճառով դժոխքի մէջն էին: Արդ, ինչպէս Աստուած արեգակը կծագեցնէ չարերուն ու բարիներուն վրայ, անձրեւ կու տայ արդարներուն ու մեղաւորներուն, եւ ինչպէս հրամայեց բարիք ընել մեզ ատողներուն ու օրհնել՝ մեզ անիծողները. տակաւին, ինչպէս խաչին վրայ զԻնք խաչ հանողներուն համար աղօթեց, թէ՝ «Հա՛յր ներէ՛ ասոնց, որովհետեւ չեն գիտեր, թէ ինչ կ'ընեն»: Նոյնն ըրաւ դժոխքին մէջ՝ այցելելով արդարներուն ու մեղաւորներուն՝ ըսելով, թէ՝ դուք, որ կապանքներու մէջ էք, ելէ՛ք, եւ որ խաւարի մէջ էք, յայտնուեցէք, որովհետեւ ես Իմ Նոր Ուխտի արիւնովս կ'արձակեմ ձեզ՝ տառապանքներու անջրդի գուբին մէջ կապուածներդ՝ ըստ Զաքարիա մարգարէի վկայութեան: Սակայն Քրիստոս արդարներուն յաւիտենական փրկութիւն ըրաւ, իսկ մեղաւորներուն՝ ժամանակաւոր փրկութիւն, որովհետեւ դատաստանի օրն անոնք դարձեալ դժոխք պիտի դառնան, ինչպէս Դաւիթն ըսաւ, թէ՝ մեղաւորներն այնտեղէն դժոխք պիտի դառնան:

*Սուրբ Թովմասը եղենգնաքար (թանկագին քարի տեսակ մը), զինկի գոյն կամարածեւ,*

*Ներքեւ իջած Փրկիչը, մեզի փրկութիւն ըրաւ, կ'ըսէ:*

### Զ

Վեցերորդ աստիճանն այս էր. *երրորդ օրը մեռելներէն յարութիւն առաւ*, որ Սուրբ Բարդուղիմէոս առաքեալն ըսաւ:

Այս խօսքով Քրիստոսի անյաղթելի զօրութիւնը կը յայտնուի, որ միայնակ դժոխք իջաւ ու բազմաթիւ աւարով ու թալանով ելաւ: Դարձեալ՝ Քրիստոսի զօրութիւնը յայտնի կ'ըլլայ հոգիին ու մարմինին միաւորութենէն, որովհետեւ երկու բան, որ պատճառով մը իրարմէ կը բաժնուին, այդ պատճառին վերանալէն ետք անհրաժեշտ է, որ կրկին գան ու մէկտեղ միաւորուին: Տակաւին՝ Քրիստոս Աստուած մեր փրկութեան համար խաչին վրայ մարմինով մեռաւ, եւ ինչպէս որ մարմինով փրկութիւն, լուսաւորութիւն եւ առողջութիւն ըրաւ երկրի վրայ բոլոր տկարներուն, այդպէս ալ բնական հոգիով պէտք էր, որ բանական հոգիներուն ճար մը գտնէր դժոխքին մէջ: Եւ ինչպէս որ մարմինով մարմնաւորներուն քարոզեց, այդպէս ալ հոգիով՝ դժոխքին մէջ եղած հոգիներուն, որպէսզի Աստուած ըլլայ ամէն ինչի ու ամէնուն՝ ըստ Պօղոսի վկայութեան:

Տակաւին՝ քանի որ գործն աւարտեցաւ, ու հոգիին բաժանումին պատճառը վերացաւ մարմինէն, վայելուչ էր, որ այդ հոգին ու մարմինը դարձեալ գային ու միաւորուէին. այս մէկն անկասկած պատահեցաւ Իր թաղումէն երեք օր ետք:

Իսկ թէ ինչո՞ւ համար շուտով յարութիւն չառաւ, այլ երեք օր ետք, այս ալ առանց պատճառի չէ:

Նախ՝ որպէսզի մարգարէներուն խօսքը կատարուէր, որոնք այնպէս գուշակած էին, թէ՝ երեք օր գերեզմանին մէջ պիտի մնայ, ինչպէս Յովնանը կէտ ձուկի փորին մէջ մնաց:

Երկրորդ՝ որպէսզի Քրիստոսի մահը փաստուէր, որպէսզի չըսէին, թէ աչքերուն երեւցող էր, այդ պատճառով շուտով յարութիւն առաւ:

Երրորդ՝ որպէսզի Քրիստոսի մարմինին անապականութիւնը փաստուէր, որովհետեւ Անոր մարմինը երեք օր գերեզմանին մէջ պիտի մնար, որով չէր կրնար հոտիլ, ինչպէս Ղազարոսին մարմինը, որպէսզի Դաւիթին խօսքը կատարուէր, թէ՝ սուրբիդ թոյլ պիտի չտաս, որ ապականութիւն տեսնէ:

Չորրորդ՝ Քրիստոս մեզի օրինակ տուաւ, թէ ինչպէս ես երեք օր ետք յարութիւն առի, այդպէս ալ բոլոր քրիստոնեաները մեղքերու դժոխքէն յարութիւն կ'առնեն զղջալէ, խոստովանելէ ու ապաշխարելէ ետք:

Դարձեալ՝ Քրիստոս երեքօրեայ թաղմամբ ու յարութեամբ մեզի ցոյց տուաւ, թէ մարդը մեղքով երեք կերպով կը մեռնի: Որովհետեւ ոմանք միշտ անմահ են Աստուծոյ շնորհիւ, ինչպէս հրեշտակները. ոմանք կան, որոնք կը մեռնին, կ'ողջնան ու դարձեալ կը մեռնին, ինչպէս Ղազարոսը, որ կը նշանակէ՝ մեղաւորը, որ մեղքերու մահէն կը դառնայ, ու դարձեալ մեղքերու մէջ կ'իյնայ ու կը մեռնի, որ եթէ դարձեալ կամենայ դառնալ, դժուարութեամբ կը կանգնի: Ինչպէս Քրիստոս Ղազարոսին արցունքներով, մեծ աղաղակով ու աղօթքով յարութիւն տուաւ, որովհետեւ չորսօրեայ էր: Չորսօրեայ ըսելով՝ կ'իմանանք մեղքերու հաւանութիւնը, գործը, սովորութիւնը եւ մեղքերուն մէջ յամառիլը:

Երկրորդն անոնք են, որոնք կը մեռնին ու յարութիւն չեն առներ. այդպիսիները չզղջացող մեղաւորներն ու դեւերն են, որոնք յաւիտեան չեն ողջնար:

Երրորդն անոնք են, որոնք մէկ անգամ մեռան ու յարութիւն առին եւ այլեւս չեն մեռնիր, ինչպէս էր պարագան Քրիստոսի յարութեան, Տիրամայր Աստուածածինին, Յովհաննէս աւետարանիչին եւ այն սուրբերուն, որոնք մեռելներէն յարութիւն առին, երբ Քրիստոս Իր հոգին աւանդեց: Ասոնք կը խորհրդանշեն մէկ անգամ մեղանչողը, ապաշխարութեամբ կանգնողը եւ այլեւս չմեղանչողը:

*Բարդուղիմէոս այն սարդիոնը, անմարելին ինչպէս սէյլան,*

*Տիրոջ յարութեան երրորդ օրը, վկայ կ'ըլլայ աստուածաբան:*

### Է

Եօթներորդ աստիճանն այս էր. *երկինք ելաւ ու ամենակարող Հօր աջ կողմը նստաւ.* այս մէկը Փիլիպպոս առաքեալն ըսաւ: Ասով մեզի սուրբերուն կատարեալ երանութիւնը կը սովրեցնէ:

Նախ՝ թէ մարդ պէտք է աշխարհէն ու աշխարհի սէրէն ելլէ, թեթեւնայ մեղքերէն, որպէսզի կարենայ երկինք վերանալ. ինչպէս Ենովքը, որ Աստուծոյ հաճելի եղաւ, եւ Աստուած զայն Ադամին դրախտը փոխադրեց:

Երկրորդ՝ սուրբերուն վայելուչ տեղը կը սովրեցնէ, որ կ'ըսէ՝ երկինքի մէջ:

Երրորդ՝ սուրբերուն՝ աշխատանքէ հանգստութիւնը, այդ պատճառով կ'ըսէ՝ նստաւ:

Չորրորդ՝ գեղեցիկ ընկերակցութիւնը, որ կ'ըսէ՝ Հօր աջ կողմը:

Հինգերորդ՝ սուրբերուն անկողոպտելի փառքը, ուստի կ'ըսէ՝ ամենակարող, որովհետեւ Քրիստոս ըսաւ, թէ՝ հաւատացեալներն ու ոչխարները, որ Հայրն Ինծի տուաւ, ո՛չ ոք կրնայ յափշտակել Հօրս ձեռքէն, քանի որ արդարներուն հոգիներն Աստուծոյ ձեռքերուն մէջն են, ու մահը չի՛ կրնար անոնց մօտենալ, ինչպէս կ'ըսէ Սողոմոն Իմաստունը:

Արդարեւ՝ Քրիստոս համբարձաւ, Աստուածածինը վերափոխուեցաւ, Եղիան ու Ենովքը վերացան, սուրբերը կը թռչին, որովհետեւ թեթեւ ամպերու նման են:

Տակաւին՝ Սուրբ Աստուածածինն իր Որդիով վերափոխուեցաւ. Եղիան՝ հրեշտակներով. սուրբերը՝ երկու թեւերով՝ հաւատքով ու բարի գործերով, իսկ Քրիստոս առանց օգնականի ու աջակցողի համբարձաւ եւ նստաւ ու միշտ կը նստի Հօր աջ կողմը, այսինքն՝ Իր Հօր յաւիտենական փառքին մէջ:

Աջ կողմով կ'իմանանք, թէ Անորմէ երբեք չբաժնուեցաւ:

*Սուրբ Փիլիպպոսը՝ ոսկեքար թիլայ (անորոշ տեսակի թանկագին քար),*

*Մեր Փրկիչի համբարձումին վկայ է,*

*Թէ՝ փառքի մէջ՝ Իր Հօր մօտ մնայուն կերպով նստաւ,*

*Որմէ յաւիտեան բաժանում չկայ:*

*Շարունակելի*

**Փոխադրութիւնը՝**
**Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԻ**

# Հայ Եկեղեցին եւ արեւելահայ դպրոցը...

↩ *էջ 3*

*Դ–Ե բաժին.* «....բացատրութիւն գլխաւոր կանոնաց առոգանութեան եւ համաձայնութեան: Թարգմանութիւն դիւրին հատուածոց ի հայկականէ ի ռուս լեզու» (տես «Կանոնք եկեղեցական-ծխական ուսումնարանաց հայոց, Վաղարշապատ, 1889, էջ 20–39):

Սահմանված վերոնշյալ կանոնների շնորհիվ հայկական դպրոցը բռնեց զարգացման մի նոր ճանապարհ: Երեւան եկան տարբեր տեսակի դպրոցներ, որոնց մեջ, որպես ազգային կրթության ստորին մակարդակ, տիրապետող դարձավ հայկական եկեղեցական-ծխական դպրոցը: Դպրոցներ տարածվեցին ոչ միայն Անդրկովկասում, այլ նաեւ Անդրկովկասից դուրս՝ ցարական կայսրության այլ տարածաշրջաններում: Ս. Էջմիածնի Սինոդի տվյալների համաձայն՝ 1871 թ. Անդրկովկասում կար մոտ 90 ազգային դպրոց (15-ը՝ իգական): Իսկ ըստ Ա. Երիցյանի՝ 1871 թ. արեւելահայ դպրոցների թիվը հասնում էր 138-ի. այս դպրոցների միայն մի մասն էր գտնվում Անդրկովկասում (տես «Արձագանք», Թիֆլիս, 1882, թիվ 6, էջ 68):

Այսպիսով՝ եկեղեցական-ծխական դպրոցները պետության կողմից որեւէ օժանդակություն չէին ստանում, արդյունքում որոշ դպրոցներ փակվում էին, եւ խաթարվում էր ուսումնական գործընթացը: Այնուամենայնիվ եկեղեցական-ծխական դպրոցները ԺԹ դարի 60–70-ական թթ. նկատելի առաջընթաց ունեցան եւ նշանավորեցին կրթության զարգացման նոր աստիճան:

### Բ. ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

ԺԹ դարի՝ մասնավորապես դարի երկրորդ կեսի, դպրոցների մեջ ամենից բարձրը թեմականն էր (հոգեւոր սեմինարիա): Այս կարգի դպրոցները բացվել էին դեռեւս 1836 թ.՝ «Կանոնադրության» համաձայն: «Պոլոժենիեն» թույլատրում էր Ռուսական կայսրության տարածքում գտնվող հայկական վեց թեմում (Նոր Նախիջեւան եւ Բեսարաբիա, Աստրախան, Երեւան, Վրաստան, Ղարաբաղ, Շամախի) ունենալ հոգեւոր սեմինարիա, որը հայտնի է եղել «հոգեւոր դպրոց», «դպրոց», «դպրանոց», «ճեմարան» եւ այլ անվանումներով: Կանոնադրության համաձայն՝ յուրաքանչյուր թեմ պետք է ունենար մեկ թեմական դպրոց, սակայն, ինչպես տեսնում ենք, հոգեւոր սեմինարիաներ բացվեցին միայն ստորեւ հիշատակված քաղաքներում: Այսպիսով՝ ԺԹ դարի առաջին կեսին թեմական դպրոցներ բացվեցին հայկական ոչ բոլոր թեմերում. 1837 թ.՝ Երեւանում եւ Թիֆլիսում, 1838 թ.՝ Շուշիում: Շամախիում 1844 թ. բացված դպրոցը (թեմական) նյութական անապահով պայմաններում հնարավորություն չէր ունեցել զարգանալու եւ դասվելու առավել բարձր կարգի դպրոցների թվին, այդ պատճառով 1886 թ. ընդունված կանոնների համաձայն՝ այն պաշտոնապես անցավ ծխական դպրոցների շարքը: Այս դպրոցի պատմությունը շարադրելիս Ս. Խուդոյանը հաղորդում է, որ «1888–1889 ուս. տարվա վիճակագրական տեղեկագրերում նշված է արդեն ոչ թե որպես թեմական, այլ միայն «տղայոց երկդասեան ուսումնարան»՝ 147 աշակերտով»: Շամախիի դպրոցը բացվել է 1844 թ., իսկ 1846 թ. Ներսես Ե Աշտարակեցի հայրապետի (1843–1857 թթ.) կարգադրությամբ փակվել եւ վերաբացվել է 1858 թ.՝ հիշյալ կաթողիկոսի մահից հետո: 1873 թ. Շամախիի դպրոցն ունեցել է 73 աշակերտ, իսկ 1874-ին՝ 7 ուսուցիչ, 124 աշակերտ, 1895-ին՝ 6 ուսուցիչ եւ 117 աշակերտ: Դպրոցը փակվել է 1885 թ. եւ վերաբացվել 1886-ին (*Ս. Խուդոյան*, Արեւելահայ դպրոցները 1830–1920 թթ., Երեւան, 1987, էջ 457–458): 1869 թ. փետրվարին Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցին ընդունեց թեմական դպրոցների կանոնադրությունը (տես «Արարատ», 1869, թիվ 10, էջ 141–146): Կանոնադրության համաձայն՝ թեմական դպրոցներ ընդունվելու էին եկեղեցական-ծխական դպրոց ավարտողները: Թեմական դպրոցներն ունենալու էին երեք դասարան: Ժամանակի ընթացքում կրթության պահանջը թեմական դպրոցներին ստիպեց զարգանալ, ընդլայնել առարկաների թիվը եւ ուսուցման որակը: Դասավանդվող առարկաների թվին ավելացան հայ գրականություն, աշխարհագրություն, ճարտասանություն, ֆրանսերեն եւ այլ առարկաներ, ինչն էլ իր հերթին կանխորոշում էր թեմական դպրոցների հանրակրթական բազմակողմանի ուղղվածությունը: Վերոնշյալ առարկաներից զատ՝ թեմական դպրոցներում կարեւոր տեղ էր հատկացվում հայագիտական եւ կրոնագիտական առարկաներին. այս առարկաների հետ միաժամանակ պարտադիր դասավանդվում էին ռուսաց լեզու, Ռուսաստանի պատմություն եւ աշխարհագրություն: Ա. Երիցյանը հիշատակում է, որ «Պոլոժենիեն» պահանջում էր «ի թիւս այլ առարկայից պարտի լինել լեզու ռուսաց եւ պատմութիւն եւ աշխարհագրութիւն կայսերութեան Ռուսաց....» (*Ա. Երիցեան,* Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի հայք 19-րդ դարում (1831–1842 թթ.), Թիֆլիս, 1889, էջ 582):



*Շարունակելի*

**Զաքարա սրկ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**
**Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Հոռոմայրի Ս. Նշան վանք

Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի Օձուն գյուղը ծովի մակարդակից բարձր է մոտ 1125 մ, գտնվում է մարզկենտրոնից գրեթե 50 կմ հյուսիս-արեւելք, քաղաքամայր Երեւանից՝ մոտ 175 կմ հեռավորությամբ:

Միջնադարյան Հայաստանի հոգեւոր-մշակութային նշանավոր կենտրոն ու պատմաճարտարապետական գողտրիկ հուշարձան Հոռոմայրի վանական համալիրը, որը հայ մատենագրության մեջ հիշատակվում է է դարից, Օձուն գյուղից հարավ-արեւելք է մոտ 1,5 կմ: Հոռոմայրի հուշարձանախումբը բաղկացած է երկու մասից. ստորին հուշարձանախումբը գտնվում է Դեբեդ գետի ձախափնյա ձորալանջին՝ ուղղաձիգ քարափի տակ: Ստորին հուշարձանախումբ այցելելը համեմատաբար դյուրին է Վանաձոր–Ալավերդի ավտոճանապարհի Քոբեր եւ Սանահին երկաթուղային կայարանների միջեւ գտնվող հատվածից՝ դեպի ձախ վերելք կատարելով կամ էլ վերջերս բացված քայլարշավային արահետով, որն սկիզբ է առնում Օձուն գյուղից մոտ 0,5 կմ դեպի արեւելք գտնվող Ծիրանավոր-Ծաղկավանք եկեղեցու մոտակայքից եւ իջնում դեպի Հոռոմայրի ստորին հուշարձանախումբ, ապա շարունակվում մինչեւ Քոբայրավանք: Հոռոմայրի վերին հուշարձանախումբը գտնվում է բարձունքում՝ սարահարթի պռնկին՝ Ալավերդի–Ստեփանավան ավտոճանապարհի Օձուն–Այգեհատ ճանապարհահատվածից դեպի ձախ՝ նախկին օդնավակայանի մեձակայքում: Վերին հուշարձանախումբն Օձուն գյուղից հարավարեւելք է մոտ 1.5 կմ հեռավորությամբ:

Հոռոմայրի համալիրի ստորին կամ ձորամիջի հուշարձանախումբը բաղկացած է իրար կից՝ մեկ շարքում, ոչ մեծ եկեղեցի-զանգակատնից, երկու եկեղեցուց, առանձին գտնվող ժամատնից, մատուռներից, բնակության եւ տնտեսական կարիքների համար հարմարեցված անձավներից ու վիմափոր սենյակներից եւ խաչքարերից:

Հոռոմայրի ստորին հուշարձանախմբի վաղագույն կառույցը միջնամասի եկեղեցին է, որին հյուսիսից կից է Սուրբ Նշան եկեղեցի-զանգակատունը, իսկ հարավից՝ մյուս՝ ավելի փոքրածավալ եկեղեցին: Կառույցը երկթեք տանիքով արեւելք-արեւմուտք ձգվածությամբ թաղածածկ սրահ է, որը հյուսիսից բացված միակ մուտքով հաղորդակցվում է եկեղեցի-զանգակատան հետ: Լույսը թափանցում է արեւելյան եւ արեւմտյան ճակատներից բացված եւ դեպի ներս լայնացող մեկական լուսամուտներից: Եկեղեցին կառուցված է կրաշաղախով շարված կոպտատաշ, ծակոտկեն բազալտով: Ըստ հորինվածքային, կառուցողական, ծավալատարածական առանձնահատկությունների վերլուծության՝ եկեղեցին մոտավոր թվագրվում է ԺԲ դարի կեսով:

Հոռոմայրի կենտրոնական եկեղեցուն կից Սուրբ Նշան եկեղեցի-զանգակատունը պայտաձեւ խորանով թաղակապ դահլիճ է: Արեւմտյան պատն անմիջականորեն թիկնած է ժայռին, ստորին հատվածում շարված են նրբաքանդակ խաչքարեր: Արեւմտյան պատի միջին մասից դուռ է բացվում դեպի ժայռափոր, շրջանաձեւ հատակով անձավը: Հատակը պատված է տապանաքարերով: Պատերը շարված են սրբատաշ բազալտաքարերով: Միակ՝ հյուսիսային մուտքն ունի սլաքաձեւ վերջավորությամբ ոչ խոր փորված եզրակալ, որի երկու կողմերում՝ առդիր քարերի վրա, վարպետորեն պատկերված են հրեշտակներ՝ ամբողջ հասակով, ձեռքներին՝ խաչեր: Բարավորի հարթության վրա Քրիստոսի դիմաքանդակն է՝ ներքեւում գոտեւորված զույգ դափնետերեւով: Աջ ձեռքը բարձրացրած է, իսկ ձախ ձեռքին Ավետարան է՝ երկու կողմերում համապատասխանաբար Յ[իսուս] Ք[րիստոս] մակագրությամբ: Ըստ ավանդության՝ այստեղ է պահվել Հովհան Օձնեցու (Իմաստասեր, Հովհաննես Գ Օձնեցի, Հայոց կաթողիկոս՝ 717–728 թթ.)՝ վանքին նվիրած Սուրբ Նշանը՝ Քրիստոսի խաչափայտի մասունքը, որի պատվին էլ եկեղեցի-զանգակատունը, իսկ հետագայում նաեւ ամբողջ վանական համալիրը կոչվել է Հոռոմայրի Սուրբ Նշան կամ Սուրբ Նշան (Սըփնիշան):

Պահպանված շինարարական արձանագրության համաձայն՝ եկեղեցին 1187 թ. կառուցել կամ հիմնովին վերաշինել են Զաքարե եւ Իվանե Զաքարյանները: Եկեղեցի-զանգակատան խորանի անկյունային մասերի եւ արեւմտյան պատի պահուսակների վրա հենված չորս որմնակամարները պահում են թաղածածկը եւ հետագայում (1290 թ.) կառուցված զանգաշտարակը, որն ունի ութ սյուն՝ մեկընդմեջ ութանկյուն եւ քառակուսի կտրվածքներով, որոնց վրա խարսխված են դեղնավուն ֆելզիտե սլաքաձեւ կամարները:

Եկեղեցու շուրջ տարածված գերեզմանոցում պահպանվել են մի քանի գեղաքանդակ խաչքարեր ու տապանաքարեր: Գեղարվեստական հարդարանքով աչքի է ընկնում 1201 թ. կերտված «Տերունական» խաչքարը: Առանձնակի արժեքավոր է նաեւ խաչքարերից մեկը, որի պատվանդանի երեք նիստերին փորագրված ընդարձակ արձանագրությունը բովանդակությամբ պայմանադրություն է:

Հարավից կենտրոնական եկեղեցուն մոտ է եւս մեկ եկեղեցի (պայմանականորեն՝ Հարավային), որն առավելապես մատուռ է: Հարավային եկեղեցին քառակուսաձեւ համաչափություններով թաղակապ դահլիճ է, որի ծածկը պահելու համար միջին եկեղեցու հարավային պատին կից դրվել է նոր պատ: Եկեղեցու միակ՝ արեւմտյան մուտքի բարավորին պահպանված արձանագրությունից տեղեկանում ենք, որ եկեղեցին 1201 թ. կառուցել են Հակոբի եւ Խալիի որդիները՝ Սարգիսն ու Զաքարեն: Եկեղեցին կառուցված է սրբատաշ խոշոր բազալտաքարերով ու կրաշաղախով: Լուսավորվում է արեւելյան ճակատին գտնվող եւ դեպի ներս լայնացող պատուհանից:

Ս. Նշան եկեղեցի-զանգակատնից մոտ 25 մ հյուսիս գտնվում է Ս. Աստվածածին ժամատունը, որն ընդարձակ սրահ է՝ հյուսիս-հարավ ձգվածությամբ: Արեւելյան միջին մասում ունի ներքուստ կիսաշրջանաձեւ, արտաքուստ՝ ուղղանկյուն եզրագծով ու նեղ պատուհանով խորան, որի ճակատին փորագրված արձանագրության համաձայն՝ ժամատունը 1301 թ. կառուցել է Իգնատիոս վարդապետը: Խորանի եզրային պատերին կան մեկական լայն պատուհաններ: Ունի երկու մուտք՝ հյուսիսային եւ հարավային կողմերից: Արեւմտյան կողմից որպես պատ է ծառայել ուղղաձիգ կտրված ժայռը: Արեւելյան պատի ստորին շարքը, խորանի կամարը եւ մուտքերի եզրակալները սրբատաշ, իսկ մյուս պատերը կոպտատաշ բազալտաքարերով են շարված: Ներսում՝ խորանի պատին, նկատվում են որմնանկարների հետքեր: Քանի որ Ս. Աստվածածին ժամատան ծածկը չի պահպանվել, ենթադրվում է՝ այն եղել է փայտաշեն: Արեւելյան ճակատին բացված է երեք լուսամուտ: Ժամատնից քիչ հեռու պահպանվել են մատուռի (1216 թ.) ավերակներ:

Հոռոմայրի վանական համալիրի ստորին կամ ձորամիջի հուշարձանախմբին արեւմուտքից հարող ժայռի տարբեր հատվածներում պատրաստվել են վիմափոր սենյակներ ու խցեր՝ ամրացված պատերով: Խցերի մի մասը ծառայել է իբրեւ ճգնարան: Ժայռափոր կառույցների մեջ առանձնանում է հարավարեւմտյան ժայռի միջին մասում գտնվող վիմափոր մատուռը: Ստորին հուշարձանախումբն աչքի է ընկնում շրջակա միջավայրի հետ վարպետորեն ներդաշնակվածությամբ: Ս. Նշանից ներքեւ Թնդոցի ձորն է, ուր գտնվում է անուշահամ, հորդառատ Թնդոց աղբյուրը, որը բխեցնելու հրաշքն ավանդաբար վերագրվում է Ս. Հովհաննես Գ Օձնեցի կաթողիկոսին:

Հոռոմայրի համալիրի վերին կամ ձորեզրի հուշարձանախումբը բաղկացած է իրար կից մի զույգ թաղածածկ եկեղեցիներից եւ նրանց միջեւ համաչափորեն տեղադրված գավթից ու եկեղեցիների արեւմտյան կողմում տարածված միջնադարյան գերեզմանոցից, ուր կան նաեւ նոր ժամանակների տապանաքարեր:

Ձորեզրի հուշարձանախմբի հնագույն կառույցը հարավային եկեղեցին է (Ծիրանավոր Սուրբ Նշան), որը կիսագլանաձեւ թաղածածկով ուղղանկյուն դահլիճ է՝ առնված երկլանջ կտուրի տակ: Պայտաձեւ խորանը գմբեթարդի սահմանագծով եզերված է պարզ տրամատի գոտիով, որը շարունակվում է նաեւ երկայնական պատերին: Արեւելյան պատուհանի պսակը զարդարված է դեմ հանդիման կանգնած ու գլուխները հետ գցած աղավնիների քանդակով: Եկեղեցին կառուցված է կապտավուն բազալտի սրբատաշ քարով:

Ըստ մուտքի որմնակամարի վրա պահպանված արձանագրության՝ եկեղեցին 1206 թ. կառուցել է վանքի առաջնորդ, վանահայր Սամուելը: Արեւելյան պատուհանի բարավորի վրա հավերժացած է կառուցող Գրիգոր վարպետի անունը:

Ձորեզրի հուշարձանախմբի հյուսիսային եկեղեցին ունի նույն հատակագծային հորինվածքը՝ չափերի տարբերությամբ: Եկեղեցին կառուցված է դեղնաշագանակագույն ֆելզիտով, մուտքը հյուսիսային կողմից է եւ բացվում է գավթի մեջ: Արեւմտյան ճակատն ամբողջությամբ պատված է խաչաքանդակներով:

Երկու եկեղեցիների միջեւ կառուցված գավիթը քառակուսաձեւ հատակագծով սրահ է՝ ծածկված անկյունագծային դասավորությամբ, փոխհատվող կամարներով ուժեղացված թաղով: Թաղակամարի վրա՝ փականաքարի երկու կողմերում, քանդակված է հավերժության խորհրդանիշ ու բազմաթերթ վարդյակ: Գավիթը ձորեզրի հուշարձանախմբի առավել ուշագրավ կառույցն է եւ կառուցվածքային տվյալներից դատելով՝ հյուսիսային եկեղեցու հետ միասին հարավային եկեղեցուն է կցվել ավելի ուշ՝ հավանաբար ԺԳ դ. կեսին՝ իրար միացնելով հարավային եւ հյուսիսային եկեղեցիները: Գավթի՝ քանդակազարդ շրջանակով եզերված եւ բավական լայն մուտքն արեւմտյան կողմում է: Երկու եկեղեցիների մուտքերը գավթի կողմից են: Գավիթը չունի պատուհաններ, կառուցված է ֆելզիտե սրբատաշ քարով:

Թեեւ Հոռոմայրի վանական համալիրը բաղկացած է իրարից բավական հեռու գտնվող ձորամիջի եւ ձորեզրի հուշարձանախմբերից, Հոռոմայրն այնուամենայնիվ մեկ միասնական հոգեւոր-մշակութային համալիր է:

2017 թ. Հոռոմայրի վանական համալիրի ձորեզրի հուշարձանախումբը վերանորոգվել է ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի եւ Թումանյանի տարածաշրջանի էլցանցի պետ Աշոտ Շաքարյանի մեկենասությամբ: Հուշարձանախմբի վերականգնման նախագծի հեղինակն է ճարտարապետ Սուրեն Աբովյանը:

*Շարունակելի*

**Արման ՄԱԼՈՅԱՆ**
**Պատմական գիտ. թեկնածու**

*Քարայրից բացվող տեսարան*

*Արձանագրություններով պատված ժայռ*

*Արձանագրություն*

*Արձանագրություն եկեղեցու բարավորին*

# Մեր վարդագույն բարեկամը

Ամառնամուտից մինչեւ օգոստոսի սկիզբն Արարատյան հովտի, Արագածոտնի, Կոտայքի, Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերի այգիներում ստեպ-ստեպ որոտում են որսորդական հրացաններ, որոնց մահաբեր փողերն ուղղված են այնպիսի օգտակար թռչնի վրա, ինչպիսին վարդագույն սարյակն է: Կոպտորեն խախտելով որսի կանոնները՝ ոչնչացվում է մեր բնության գողտրիկ այդ փետրավորը՝ հայ գյուղացու դարավոր բարեկամը:

Հին Հայաստանում սուրբ թռչունն այսօրվա Հայաստանում ոչ միայն անտեսված ու մոռացված է, այլեւ դրանց սպանում են... անարգել...

* * *

Վաղ մանկության իմ առաջին զարմանքներից մեկը Ոսկեվազ-Օշականի մեր ձորահովտի թթենիներին լցված անթիվ-անհամար վարդագույն սարյակներն էին՝ «թթի ղշերը»: Որքա՜ն շատ էին, երբեմն՝ տասնյակ հազարների հասնող: Օրն ի բուն համերգում էին՝ թութ անուշ անելիս կամ վիթխարի ընկուզենիների զովասուն սաղարթներում հանգստանալիս: Իսկ թե հանկարծ մի տեղ հրացան որոտար, օ՛, խուճապահար թռչում, խճճվում էին օդում, երկինքը ծածկում հսկա ամպի պես:

Բնական մետաքսի հումքի արտադրության պետական առաջադրանք ունեին կոլտնտեսություններն ու խորհրդային տնտեսությունները, անհատները, եւ շերամապահության համար գրեթե ամեն գյուղում հեկտարներով թթաստաններ կային: Մայիս ամսվա ընթացքում թթենու մատղաշ տերեւներով առատորեն կերակրում էին շերամորդերին եւ նույն ամսում ավարտում գործը:

Ընդամենը քորոցի գլխի չափն ունեցող շերամորդի թրթուրը թթենու կաթնոտ տերեւներով սնվում, աճում, դառնում էր մատնաչափ՝ տռուզ մարմինը ծայրեծայր լցված թանձր հեղուկով: Դրանով այդ բնապարգեւ, անխոնջ աշխատավոր միջատն օրն ի բուն սպիտակ, նրբաթել բոժոժ էր գործում, ինքը սպառվում, սմքում, թիթեռի հարսնյակ դարձած՝ պատսպարվում նույն բոժոժի մեջ, մինչեւ...

Բնական մետաքսի արտադրության հումքը հենց այդ թանկարժեք բոժոժներն էին, որ տոննաներով վաճառվում էր պետությանը, եւ որով ամբողջ տարին աշխատում էր Երեւանի մետաքսի գործարանը (նույնը՝ Ստեփանակերտում...):

Բնական, գեղեցիկ, ամուր ու թեթեւ կտորները շուտով դառնում էին նրբագեղ, պերճ հագուստներ, որոնք մարդիկ կրում էին հաճուքով:

Բնական մետաքսը, ի դեպ, օգտագործվում է եւ այլ բնագավառներում, անգամ՝ տիեզերքում:

Շերամի եւ բնական մետաքսի հինավուրց հայրենիք Չինաստանն այսօր եւս աշխարհի առաջատարն է...

...Դեռ թութը չհասած՝ մեր երկիր էին «ժամանում» վարդագույն սարյակի բյուրավոր երամները: 1970-ականների սկզբներին տեղական մարմինները եւ նրանց վերադասները որոշեցին ազատվել շերամապահության ճյուղի «գլխացավանքից» եւ «տրակտոր-բուլդոզերներով» անգթորեն արմատախիլ արեցին հարյուրավոր հեկտարների հասնող կանաչավետ, բերք ու բարիքի աղբյուր այն հրաշալի թթաստանները եւ հայտնի խոսքի հանգույն՝ «տեղը վարեցին, բոստան ցանեցին»: Բանաձեւը պարզ է՝ չկա թթենի, չի կարող լինել նաեւ շերամապահություն...

Դավին անտեղյակ՝ հարավից, ամեն տարվա պես, կրկին եկան թթասեր սարյակները: Անակնկա՛լ. եկան եւ... սովի մատնվեցին: Կեր ճարելու համար ճարահատյալ դեգերեցին ամենուր, անահ խուժեցին տնամերձ այգիները, հարկադրված «զբաղվեցին» կեռասի, ծիրանի, մինչեւ իսկ կիսահաս խաղողի կողոպուտով:

Հաջորդ տարիներին, բնականաբար, խիստ պակասեց վարդագույն սարյակների քանակը, իսկ վերջին տարիներին՝ առավել: Եվ դեռ այսօր կան մարդիկ, որոնք արճճե գնդակներով են դիմավորում Հայաստանում արդեն խիստ սակավաթիվ դարձած այդ օգտակար թռչուններին:

***

Արդեն կես դար է, ինչ չեմ կրակել սարյակի վրա, ճիշտ այն պահից, երբ գրականության միջոցով առավել մանրամասն ծանոթացա այս օգտակար թռչնի վարք ու բարքին: Ինձ եւ ինձ նման հազարավորների սարյակի վարդագույն «կերպարին» հանգամանորեն ծանոթացրել է մեր բնության անգերազանցելի գիտակ, որսորդ եւ գրող Վախթանգ Անանյանը՝ թե՛ բանավոր զրույցներով, թե՛ հրապարակախոսական հոդվածներով եւ թե՛ «Տարմահավ կամ վարդագույն սարյակ» ուսումնասիրությամբ: «Հայաստանի կենդանական աշխարհը» աշխատության չորրորդ հատորի հիշյալ գլուխը նույնպես գրվել է բնախույզի, բարեխիղճ ուսումնասիրողի եւ որսորդի խորին իմացությամբ: Սարյակի մասին անվանի գրողի ջերմ տողերն ընթերցելուց հետո բանական, հայրենի բնաշխարհը սիրող, փոքր-ինչ որսորդական բարոյականություն ու խիղճ ունեցողը հազիվ թե այլեւս զենք ուղղի 65–80 գրամանոց գեղեցիկ եւ անչափ օգտակար այդ թռչնակի վրա:

Աշխատության նշված գլուխն սկսվում է այսպես. «Հայ գյուղացին փետրավորների աշխարհում ունի իր դարավոր բարեկամները, մտերիմները, սիրո արժանի արարածները: Եվ դրանցից մեկն էլ վարդագույն սարյակն է»: Անվիճելի է, որ համակրանքը թռչնի նկատմամբ գալիս է հազարամյակների խորքից. չէ՞ որ «այդ փոքր թռչունը մեծ դեր է խաղացել մեր հողագործ նախնիների կյանքում», մանավանդ որ «մեր երկիրը պարբերաբար ենթարկվել է մորեխի ահավոր ավերածությունների»:

Հայ մատենագիրներից Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ՝ 954 թ. եկավ մորեխը՝ «....որպէս աւազ զծովու եւ ապականեաց զերկիրը: Եւ սաստկանայր սովն առաւել....»: Անասունները մորթվեցին, այնուհետեւ խելահեղության հասած մարդիկ գազանաբար հարձակվում էին միմյանց վրա... Բազմաթիվ գյուղեր եւ գավառներ դարձան անմարդաբնակ:

Այսպիսի հուսահատական պահերին հայ գյուղացուն օգնության է հասնում հին ու հավատարիմ բարեկամ վարդագույն սարյակը (գիտական անվանումը՝ Pastor Roseus), որին «տարմահավ», «մորեխածիտ», «Սուրբ Յակոբայ ղուշ» են անվանել, իսկ այսօր շատերը խոսակցական լեզվով՝ «թթի ղուշ»: Պատմությանը դեպքեր են հայտնի, երբ այդ թռչունները հոծ բազմությամբ նետվել են մորեխի պարսերի վրա, կոտորել, ոչնչացրել են աղետաբեր այդ միջատների «ամպերը», ժողովրդին փրկել վերհաս սովից:

Մորեխասպան վարդագույն սարյակի մասին հիշտակություններ կան Եկեղեցու նշանավոր հայր Բարսեղ Կեսարացու, առաջին հայ կենդանաբան Աբրահամ քահանա Պոլսեցու, գերմանացի գիտնական, Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի, ռուս կենդանաբան Կ. Սատունինի եւ այլոց աշխատություններում: Բարսեղ Կեսարացին նկատել է, որ երամներով շրջող թռչուններ կան, որոնք երկրերկիր են տեղափոխվում «համագունդ» խմբերով (տարմերով), որոնցից են տարմահավերը, եւ թե «ինչպես Աստված Իր մարդասեր զորությամբ ստեղծեց այդ փոքր թռչունների արագահալ (արագ մարսող՝ *Ս. Ս.*) կտռնաքը եւ արագաթռիչք անցումները՝ մարդուն հասնելու համար»:

Եվ բնական է, որ մեր նախնիները պետք է մեծարեին իրենց սովամահությունից փրկող թռչնին, եւ սարյակը հնում պաշտամունքային թռչուն է եղել: Մինչեւ վերջերս Արարատյան դաշտի եւ մեր շատ այլ շրջանների բնակիչները սուրբ են համարել Մասիսի ստորոտում՝ Ակոռի գյուղի մոտ գտնվող Ս. Հակոբա վանքի շրջակայքից եկող սարյակներին:

1829 թ. պրոֆեսոր Ֆ. Պարրոտի հետ Արարատի գագաթը հասած հայ մեծ գրող եւ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը հետագայում նկարագրել է արշավախմբի դադարի տեղը՝ Ակոռի գյուղը, որտեղ «....գտնվում է այն աղբյուրը, որի զորության մասին մեծ հավատ ունեն Անդրկովկասի բոլոր բնակիչները: Երբ մորեխն ամայացնում է արտերը, նրանք վազում են այս աղբյուրը, ջուր վերցնում սրբազան հանդիսավորությամբ, շաղ տալիս այն վայրերում, որոնց վրա հարձակվել է մորեխը: Շուտով երեւում են սարյակները... ոչնչացնում այս վնասակար միջատներին»:

Արարատի կենդանական աշխարհն ուսումնասիրող Կ. Սատունինը դեռեւս 1907 թ. նկարագրել է, թե վարդագույն սարյակը ժողովրդի շրջանում որքան մեծ հարգանք ունի, քանզի ամենուր հետեւում է մորեխի խմբերին եւ ոչնչացնում է դրանց շատ ավելի, քան կարող է ուտել:

Վ. Անանյանը 1924 թ. ամռանը Գորիսի Եռաբլուր կոչվող հանդամասում ցնցող տպավորություն է ստացել «այդ զարմանալի թռչնի զարմանալի արարքից»: Այստեղ Աֆրիկայից եւ այլ երկրներից հայտնված միլիոնավոր միջատներին ոչնչացնելու համար հավաքում են ողջ ժողովրդին, հասկերն ու կանաչ ծածկույթն արագորեն խժռող մորեխներին ավլում, լցնում են փորած խրամատները, ծածկում հողով: Դաշտում մորեխները կույտ-կույտ են եղել եւ այնքան շատ, որ լցվել են մարդկանց իրերի մեջ, ոչնչացրել ուտելիքը, հագուստը ծվեն-ծվեն արել, իսկ երբ թռչում էին, ցերեկը մթնշաղի նման մռայլվում էր: «Բայց ահա,– գրում է ակադեմիկոս Վ. Անանյանը,– հարավից եկող մի թուխ ամպ արեգակի առաջը պատեց, եւ հազարավոր թռչուններ, սվինամարտի գնացող զինվորների նման վաշտ առ վաշտ գրոհեցին թշնամուն, խցկվեցին նրա մեջ, խառնվեցին նրան, ու սկսվեց կոտորածը, ի՜նչ կոտորած... Բերկրանքի ձայներ լսվեցին ժողովրդի միջից... Թռչունները չէին խորշում մարդկանց ներկայությունից, կարծես նրանց էին հասնում մարդկանց սերն ու հիացմունքը... Ջարդված միջատների փորոտիքից աղտոտված թռչունները գնում էին մոտիկ Որոտանի ջրերում լողանում, մաքրվում եւ հետ գալիս... Պատկերացնո՞ւմ եք անընդհատ գործող հարահոսը... Մտածում էի, թե գայլն իր ագահությամբ չունի նմանը, քանի որ կոտորում է շատ ավելի, քան կարող է լափել: Ի՜նչ գայլ, ինչ բան՝ գայլի համեմատ այս թռչնի ագահությունը մորեխի նկատմամբ նմանը չունի կենդանական աշխարհում... Կարծես վրեժ էին հանում մարդկության փոխարեն, սովի մատնված երեխաների փոխարեն...»: Սարյակներն այնքան նվիրումով են զբաղվել մորեխների ոչնչացմամբ, որ անգամ «մոռացել են» իրենց ձվադրման ժամկետները...

*Շարունակելի*

**Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Արփինե Չանթիկյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հեռախոս՝ (010) 517 280**
**Էլ. փոստ՝**
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
**web կայք՝**
**krishayas.wordpress.com**
**etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan**
Ստոր. տպագր. 19.07.2023 թ.
**Տպաքանակը՝ 1265**